

ԱՇԽԱՏԱՆԻՍՏ

10963

1.2



ՄԱՍԿԵԼԻՍ

ՈՆԵ ՐԱԿԱՆ

ԼԱԳԵՐԻՆ

ЗК ЮП
Г-43

13.07.2013

10963

3K 1011

С-43

ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

24 SEP 2006

1 DEC 2009

ՊԱՏՐԱՍՏՎԵՆՔ
ՊԻՈՆԵՐԱԿԱՆ
ԼԱԳԵՐԻՆ

ԿԱԶՄԵՑ

ԱՐ. ՇԵԿՈՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՍԻՍՏԻՆԻԹԵԿԱՐԵ

ՅԵՐԵՎԱՆ

1928

Յ Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Հայաստանի պիոներական կազմակերպությունն լազերային աշխատանքների մի քանի տարվա փորձը ցույց է տվել, վոր բազմաթիվ յերեխաներ, վորոնք յեղել են լազերներում, կարողացել են առողջանալ, կոփել իրենց որգանիզմը, կազդուրվել յեվ սովորել կոլեկտիվ կյանքով—կոմունալ կերպով ապրել ու աշխատել:

Սակայն մի քանի տարվա աշխատանքների այդ փորձը ցույց է տվել նայեվ, վոր կոլեկտիվներից շատերը, առանց նախապատրաստվելու, անկազմակերպ ձեվով, վոգեվորվելով լազերային աշխատանքների գաղափարներով, մի քանի որում են դուրս յեկել լազեր: Պարզ է, վոր այդպիսի պատահական ձեվով լազեր դուրս գալով՝ յերբեք հնարավոր չի լինի լրիվ չափով իրագործել այն նպատակները, վոր հետապնդում է լազերը:

Այդ ձեվի պատահական լազերներից ու դրանից բղխող մի շարք թերություններից խուսափելու համար է, վոր լույս ենք րնծայում մեր այս գրքույկը: Լազերային աշխատանքների հետ կապված մեթոդական ցուցմունքներին, տեխնիքական ու սանիտարական գիտելիքներին՝ անխտիր յուրաքանչյուր պիոներ ծանոթ պետք է լինի դեռ լազեր դուրս գալուց մի քանի ամիս առաջ: Յեվ ահա այս գրքույկը կոգնի պիոներ աշխատողին, կորվարին ու ոգնականին՝ այդ գիտելիքներն ու ունակությունները պիոներին տալու համար:



24439.54

ՀԱՅՊՈՆԵՐԱՑԻ 2-ՐԴ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Դրառեպվար № 621 (բ), պատվեր № 2216, տիրաժ 4000

Սա «սկառօսիզմ» չէ յեզ վոչ ել «սկառուսական քեֆում», քանի վոր գրեւելը կամ նրա մեջ պարունակվող գիտելիքները մեզ վոչ քե դարձնում ենք ինքնապատկառ կամ կողեկսիվի ծրագիր այլ միջոց՝ վորպեսզի պիտոներենք ազելի կազմակերպված ձեզով կարողանան ոգնել հասարակությանը, կասարեն հասարակական ոգեզվես աշխատանք: Այդ տեսակետից ել հարկավոր է գրեւելի մեջ հիշատակված գիտելիքները չկտրել իրականութիւնից, այլ ներսուկել բոլոր տեսակի պիտոներական աշխատանքների մեջ ու այդպիսով շարկապել այդ կողեկսիվի ներքին դաստիարակչական ու հասարակական-քաղաքական աշխատանքների հետ:

Գրքուշկ կազմելու գործում խոշոր աջակցութիւն են ցույց տվել իրենց դիտողութիւններով ու ցուցմունքներով Կենտրոնութիւնի աշխատակիցներ՝ Պ. Հարութիւնյանը յեզ Գ. Ստեփանյանը: Սակայն մենք չենք կարծում, վոր սույն գրքուշկը զերծ է բացերից ու թերութիւններից, ուստի անհրաժեշտ է, վոր պիտոներական ստորին աշխատողը, կողեկտիվի աշխատանքների անմիջական ղեկավարողը՝ կովարն ու ոգնականը նույնպէս տան իրենց դիտողութիւնները, վորից հետո միայն հնարավոր կլինի լույս ընծայել յերկրորդ հրատարակութիւնն ազելի քիչ բացերով:

Ա. ՇԵԿՈՅԱՆ

Յերեվան
1 մարտի 28 թ.

ԳԼՈՒԽ I

ԼԱԳԵՐԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

ԻՆՉ Ե ԼԱԳԵՐԸ

Պիտոներներից վոմանք կարծում են, թե լագերում մահն ինչ զինվորական ձեռքէ, ճիշտ այնպէս, ինչպէս Կարմիր բանակի լագերում: Այդպէս է արդյոք:

Զինվորական լագերում կարմիր բանակայինները պատրաստվում են մարտական կյանքի, ֆրոնտի կյանքի համար, դրա համար ել նրանք ապրում են վրաններում, և մեղով լագերը նման է կտավ հագած քաղաքի: Զինվորական լագերը պահանջում է մարտիկներից զիտակցական կարգապահութիւն, կարգ ու կանոն մահն ինչում և կազմակերպված աշխատանք: Լագերում Կարմիր բանակը հաճախ կազմակերպում է զորաշարժեր, յերթեր: Մի խոսքով, կարմիր բանակայինները, ամառվա ամիսներին լագեր մեկնելով, գործնականում ստուգում և ուժեղացնում են կարմիր զորանոցում ձեռք բերած ուղղական գիտելիքները: Սակայն զինվորական լագերում միայն ուսուցմամբ չեն զբաղվում, այնտեղ, կտավ տներում՝ վրաններում, ընդարձակ դաշտերում ու անտառներում, գետակից վոչ հեռու

վորեւ վայրում, կարմիր բանակայինները կոփում են իրենց ֆիզիքապես: Պիոներներին ուղեր տեսել են Կարմիր բանակի վերադարձը լազերից քաղաք—գորանոցները, նրանք գիտեն, թե վորքան առողջ ու աշխուժ տեսք են ունենում կարմիր բանակայինները:

Պատանի պիոներների լազերը, արդյոք, ամբողջովին նման է զինվորական լազերին: Իհարկէ վոչ:

Վորպեսզի պիոներները հետագայում կարողանան դառնել խորհրդային պետութեան հաստատ հենարանը, նրանց դեռ անհրաժեշտ է անցնել ուսման և աշխատանքի լուրջ ու դժվարին դրություն:

Պիոներական լազերը շատ հետաքրքիր ու ցանկալի տեղ է յուրաքանչյուր պիոների համար, և մեր պիոներական լազերում կան շատ այնպիսի բաներ, վորոնք կիրառվում են Կարմիր բանակի լազերում: Վերցնենք կարգապահությունը: Պատանի պիոներների մեջ կարգապահությունն միշտ կա, բայց դա անհրաժեշտ է հատկապես լազերում, վորտեղ բոլոր պիոներները պետք է ապրեն վորպես մի զոգված կոլեկտիվ: Կամ թե, ասենք, կարգը, ճշտապահությունը: Այս ամենը կարևոր են պիոներական լազերի կյանքում: Պիոներներն իրենց այդ անելիքները չափազանց լավ են հասկանում, իմանալով, վոր միայն գիտակցական կարգապահությամբ և կազ-

մակերպված աշխատանքով կարելի կլինի ձեռք բերել մեծամեծ հաջողություններ: Բայց պիոներական լազերի վողջ կյանքը չի կարող համեմատվել Կարմիր բանակի լազերի հետ: Պիոներները դեռ փոքր են, այլ վոչ թե հասակ առած, արդեն ամրապնդված և ամեն տեսակի զրկանքների պատրաստ բանակայիններ:

Պիոներական լազերը—այդ պիոներական կոլեկտիվի ապրելու մի այնպիսի վայր է, վորտեղ յերեխաներն ընտելանում են կոմունալ կյանքի, կոլեկտիվ աշխատանքի:

Պիոներական լազերը կազմակերպվում է մեկ կամ մի քանի կոլեկտիվների, թվով վոչ ավելի քան 200 հոգու համար, քաղաքից մի քանի վերստ հեռու գտնվող վորեւ գյուղում, դաշտերի, անտառի, ջրի և՛ պիոներների լավագույն ընկեր՝ արևի մոտ:

Այստեղ պիոներներն ապրում են ազատ ու յերջանիկ, հանգստանում են ձմեռային աշխատանքից և՛ լինելով գյուղում՝ ապացուցում են, վոր քաղաքային պիոներները գյուղական պիոներների լավագույն ընկերներն են և բարեկամները:

Շատ հետաքրքիր և կարևոր անելիքներ են կանգնած լազեր մեկնող պիոներների առաջ, և մենք հիմա կպատմենք հենց այդ անելիքների մասին:

ԻՆՉԻՆ ՀԱՄԱՐ Ե ԼԱԳԵՐԸ

Պիոներներն առողջութիւնն այնքան ելլալ չէ։ Պիոներներն արտաքին տեսքը կարծես թե լալ է, բայց յետե նրանց ավելի մոտիկից դիտենք՝ աշխատանքում, ուսման մեջ, դպրոցում, կտեսնենք, վոր դրութիւնը բավարար չէ։

Միայն Յերևանում, անցյալ տարվա լազերի նախորդակին բժշկական քննութիւն յենթարկված 897 պիոներներից 303-ը, մոտ 34%, հիվանդներ և վատառողջներ են, վորոնցից՝

Սրտի հիվանդութիւններ ունեն	53	հոգի
Թոքերի հիվանդութիւն	»	103 »
Մալարեա	»	67 »
Սրտի պակասութիւն	»	80 »

Այդ ինչից է առաջ գալիս։ Այժմ նույնիսկ յուրաքանչյուր հոկտեմբերիկ գիտե, թե բանն ինչումն է. այստեղ մեղավոր են և իրենք պիոներները, վորոնք հաճախ իրենց վրա վերցնում են 10 պարտականութիւն, տանը հազվագյուտ հյուր են լինում, վորովհետե տուն են վերադառնում գիշերը շատ ուշ, յերբ արդեն բոլորը քնած են. այստեղ մեղավոր է և մեր ընդհանուր աղքատութիւնը, վոր թույլ չի տալիս այժմ աւելումբի, դպրոցի համար տրամադրել լավագոյն՝ լուսավոր և ընդարձակ շէնքեր։ Չե՞ վոր դուք ամենքդ գիտեք, վոր մեզ մոտ, դաշնակներ ժամանակ, քաղաքացիական կռիւների շրջանում

բոլոր շէնքերը քանդվել էին, այնքան խաբխրվել, վոր հաճախ բանվորներն ել ստիպված են լինում ապրել շատ նեղ բնակարաններում։ Այս բոլորը միանգամից վերացնել մեր իշխանութիւնը, իհարկե, չի կարողանում։

Յետե այս բոլորի վրա ավելացնենք նաև կողակտիւնների կողմից թույլ հիմքերի վրա դրված ֆիզկուլտ աշխատանքները, արդեն պատկերը պարզ կլինի։

Այս բոլոր պայմաններն ազդում են պիոներների առողջութիւն վրա, իսկ պիոներների առողջութիւնից է կախված նրանց աշխատանքի ու ուսման հաջողութիւնը։ Պիոներն ել ի՞նչ պիոներ է, ի՞նչ առաջավոր մարդ է, յետե նրա վտարները հոգնածութիւնից ծալվում են և գլուխը պտտվում է։

Անա ինչու պիոներական լազերի ամենագլխավոր յեմ ամենակարեւոր խնդիրն է՝ ամրապնդել պիոներների առողջութիւնը։

Իսկ լազերում, գյուղում, մաքուր ողում այդ կհաջողվի իրագործել ավելի հեշտութիւն և ավելի լալ։

Բայց յետե պիոներները գյուղ գնան և միայն իրենց թիկունքներն արևի տակ տաքացնեն, հանգստանան ու մի կողմ կանգնած նայեն, թե ինչպես հասակավոր գյուղացին իր մեջքն է ծռում ծանր աշխատանքի տակ, թե ինչպես փոքր յերեխաներն աշխատում են տնտեսութիւն մեջ,

—այդ դեպքում պիտներենրի վրա գյուղացիք կընայեն իբրև քաղաքի անգործների վրա: Հետեալ, պիտներական լագերի մյուս հիմնական խնդիրն է՝ հասարակական ոգտավետ աշխատանքներ կազմակերպել այն վայրում, վորտեղ հիմնըված է լագերը: Անցյալ տարվա մեր լագերային աշխատանքների փորձը ցույց տվեց, թե ինչպես գյուղացիները համակրանքով եյին վերաբերվում դեպի այն կոլլեկտիվներն ու ողակները, վորոնք ոգնում եյին գյուղացիներին և նրանց յերեխաներին՝ նրանց աշխատանքներում:

Ահա այս յերկու խնդիրը պետք է հիշե լագեր մեկնող յուրաքանչյուր կոլլեկտիվ: Լագերն ամրապնդում է մեր առողջությունը, նա հնարավորություն է տալիս մեզ ոգնելու գյուղի յերեխաներին:

Իսկ լագերի ամբողջ կյանքը չափազանց հետաքրքրական է ամեն պիտների համար: Յերեկոյան զրույցը խարույկի մոտ՝ շատ է մոտեցնում և մտերմացնում պիտներներին: Վեճի ու խռովության մասին խոսք լինել չի կարող: Ամենքը միայն ուշադիր լսում են կոլվարի պատմածը: Զուր չէ, վոր պիտներները լագերում ու հանդեսներում լագերի մասին այնքան փոփանալորներ ու զանազան հիշողություններ են գրել, վոր մինչև այսօր ել պատմում և ուրախանում են:

Լավ ու ազատ է կյանքը լագերում: Շատ

ուրախություններ է պատճառում և շատ ոգտու է բերում նա: Բայց միայն հարկավոր ենախապատրաստվել լագերի համար ինչպես հարկն է և մեկնել իրոք կազմակերպված ձևով, լավ մտածել յուրաքանչյուր չնչին բանի վրա և, վորը գրելալորն է, հաշվի առնել անցյալ տարվա փորձը, սխալներն ու հաջողությունները: Իսկ, ճիշտն ասած, մենք շատ սխալներ ենք կատարել: Հարկավոր է այնպես անել, վոր այս տարի լագերում նույնը չկրկնվի:

ԳԱՏՐԱՍՏՎԵՆՔ ԼԱԳԵՐԻՆ

Ով ուզում է լագերից ոգտու ստանալ, ով ուզում է կազմակերպված կոմունայով ապրել, ով ուզում է իսկապես կապ հաստատել գյուղական պատանիների հետ և խելացի կերպով ոգտագործել բնության բոլոր բարիքները—արևը, ոգը, ջուրը՝ նա պետք է այժմս իսկ ողակում, կոլլեկտիվում պատրաստվի լագերի համար:

Վատ կլինի այն կոլլեկտիվը, վոր լագեր մեկնելուց մի քանի օր առաջ միայն կսկսի պատրաստվել լագերի համար: Իսկ գործ շատ կա և բոլոր պիտներներն ել անելու բան կունենան: Վերցնենք, որինսկ, լագերի հագուստեղենը, կացինները, բահերը, ամանեղենը և այլն, — այս ամենը հարկավոր է նախորդ պատրաստել, թե չէ կոլլեկտիվը կմեկնի լագեր, անից հետո, և հան-

կարծ՝ բաժակները չեն բավականացնի, փայտ չեն կարող ջարդել, վորովհետև կացին չունեն. կամ թե պիոներն իր բոլոր իրեղենները ճամբորդական տոպրակի մեջ տեղավորելու փոխարեն, մի անշնորհք կապոց կշինի, լրագրի մեջ կփաթաթի և այդպես լագեր կմեկնի. ճանապարհին կապոցը մի բանի անգամ կքանդվի, իրերը կկորչեն. իսկ այդ հենց պիոների համար վատ է, իսկ մյուսների համար՝ ավելորդ խոչընդոտ: Ահա թե ինչու. կոլեկտիվը, ողակները նախորոք պետք է պատրաստվեն լագերի համար: Յուրաքանչյուր պիոներ պետք է իմանա, թե ինչ պետք է պատրաստի՝ իր հետ լագեր տանելու համար և սկսի նախորոք ժողովել անհրաժեշտ իրերը: Ողակը նույնպես հավաքում է այն ամենը, ինչ սահմանված է լագերի համար, և վողջ կոլեկտիվը պատրաստում է նյութերը՝ թուղթը, ներկը, փոքրիկ գրադարանը, գործիքները և այլն: Մի խոսքով՝ այն ամենը, ինչ անհրաժեշտ է լագերի կազմակերպված աշխատանքի համար:

Պիոներները լագերում պետք է ապրեն կոմունայով, առանց ծնողների, առանց ընտանիքի. իսկ այդպիսի կյանքը պահանջում է, վոր վաղորոք հաշվի առնվի լագերի բոլոր պահանջները:

Այսպես, աստիճանաբար, կոլեկտիվն սկսում

է պատրաստվել: Բայց վորպեսզի նախապատրաստական այդ բոլոր աշխատանքները հաջող կազմակերպվեն՝

ՎԱՂՈՐՈՔ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԻՄԱՆԱԼ, ԹԵ ՎՈՐՏԵՂ
ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԻՄՆԵԼ ՊԻՈՆԵՐՍԿԱՆ
ԼԱԳԵՐԸ

Բոլորդ գիտեք, վոր լագերային կյանքը պիոների ամենամիտաձ կյանքն է: Բոլորդ ել սիրում եք լագերը և լագերային կյանքը, բայց բոլորդ չգիտեք, թե ինչպես պետք է հիմնել ու կահավորել պիոներական լագերը: Մինչդեռ լագերային աշխատանքները հաջողությամբ կազմակերպելու նախապայմաններից մեկն էլ այդ է: Այժմվանից պետք է սովորել, վորպեսզի գարնանը լագեր դուրս գալիս՝ անոգնական չլինեք:

Ամենից առաջ պետք է իմանալ, թե լագերը վորտեղ պետք է հիմնել:

Լագերի տուշին ու ամենատանհրաժեշտ նախապայմանը ջուրն է:

Լագերն առանց ջրի, ասել է՝ կերակուր առանց աղի: Զուրը պիոների համար ամեն ինչ է. յեթե կա ջուր, պիոները և՛ մաքուր է, և՛ թարմ, և՛ առույգ. դրա համար ել լագերը միշտ մոտ պետք է լինի ջրին: Բայց իհարկե վոչ շատ մոտ, վորովհետև ուր ջուր կա, այնտեղ ել խոնավություն կրլինի, վորից հարկավոր է խուսա-

փել: Լազերի տեղը պետք է փնտրել մաքուր ջրի մոտ. յեթե մաքուր ջուր չկա, հող չէ, մաքրելու համար պետք է փորել փոքրիկ ջրհոր: Այդ նպատակով, ջրից 10—15 քայլ հեռավորութեան վրա, նայած հողի խոնավութեանը, փորում են մեկ մետր խորութեամբ ու կես մետր լայնութեամբ փոս: Մի քանի րոպեից հետո փոսը կլեցվի կեղափոխ ջրով. բավական է մի քանի անգամ դատարկել փոսի ջուրը, փորպեսզի նա մաքրվի: Այդպիսի ջուրը համարձակ կարելի չէ գործածել, փորովհետև նա անցել է հողի բավական շերտերից, ուր և թողել է իր կեղան ու մաքրվել է:

Լազերի վայրի 2-րդ պահանջը՝ քամոց պատշապարկած լինելն է:

Հաճախ լազերը խփում են այնպիսի տեղ, ուր քամին ամբողջ գիշերը՝ և մասնավորապես լուսադեմին՝ հնարավորութեամբ չի տալիս քնելու, և հոգնած պիտոներները հաճախ մրսում են փչող քամուց: Պետք է խուսափել այդպիսի տեղերից և պիտոներական լազերը քամուց պատսպարված տեղում խփել: Ավելորդ չէր լինի ասել մեր պիտոներներին, վոր ձորերն ու սարալանջերը նույնպես բավական վտանգավոր են լազեր հիմնելու համար, վորովհետև հաճախ վերևից քարերի ահագին բեկորներ են պոկվում և ցած գլորվելով սարսափելի վնաս պատճառում:

Մյուս հիմնական պահանջներից մեկն էլ այն է, վոր պիտոներական լազերը գյուղին մոտիկ լինի:


Վոչ մի պիտոներական լազեր գյուղից հեռու չպետք է գտնվի: Լազերների միջոցով պիտոներները վոչ միայն պետք է առողջացնեն իրենց որգանիզմը, այլև կապվեն գյուղի հետ, ծանոթանան նրա կյանքին ու կենցաղին, նոր գյուղի նվաճումներին, ուսումնասիրեն գյուղի պիտոներների կյանքը և ոգնեն նրանց՝ կուլեկտիվի աշխատանքներն ավելի հաջող կազմակերպելու և բովանդակալից դարձնելու համար: Այդ տեսակետից անհրաժեշտ է, վոր լազեր գնացող պիտոներները, գյուղերի հետ կապվելիս, ճարեն իրենց մի բարեկամ գյուղացի և մի պատանի ընկեր: Սրանց ու կուլեկտիվի պիտոներների միջոցով բաղաքի կուլեկտիվներ պետք է իրենց իմացած գիտելիքները սովորեցնեն նաև գյուղացի պիտոներներին:

Կարևոր նշանակություն ունի և վառելիքը, ուստի ցանկալի չէ լազերն անտառին մոտ տեղավորել, ապահովելով նրան վառելիքով: Սակայն անտառից վառելափայտ վերցնելիս՝ պետք է վաղորդ պայմանավորվել անտառապահի կամ գյուղխորհրդի հետ, ստանալ նրանց թույլտվությունը, ապա նոր կտրտել ծառերը:

Այսքան լազերի տեղի մասին, ալթմա մի քանի խոսք էլ այն մասին, թե՛

ԻՆՉՊԵՍ ՀԻՄՆԵԼ ԼԱԳԵՐԸ

Ընտրելով լագերի տեղը, դուք անցնում եք վրանները խփելուն: Նախ մաքրում եք քարերն ու խտրը՝ խոնավությունից խուսափելու համար, այնուհետև կառուցում եք վրանների կմախքը: Անհրաժեշտ է վաղորոք ձեռք բերել պատրաստի և լավ վրաններ: Դուք իմանում եք, վոր յեթե վրանը լավը չլինի, կարող ե նրա մեջ շուր թափանցել և թրջվել: Այդ տեսակետից ել, վրանները գնելիս պետք է հետևել, վոր լավ և հաստ բրեզենտից պատրաստված լինեն, վորպեսզի ապահովված լինեք անձրևից ու քամուց: Լագերում կարելի չե



նույնպես փոքրիկ վրաններ պատրաստել՝ իրենի ու մթերքները տեղավորելու համար: Վերցնում եք յերկու գավազան, կապում եք նրանց ծայրերն ախպես, վոր մեկը մյուսի շարունակութունը կազ-

մի: Վերցնում եք նաև ուրիշ յերկու գույգ գավազաններ, մի ծայրով հենում եք գույգերը գետնին, իսկ ազատ ծայրերը կապում իրար ախպես, վոր ձեռ միացրած յերկու գավազանների վերջավորություններն ընկնեն դրանց վրա:

Այնուհետև իրար եք կապում վրանի կտորի 4 մասերը և ծածկում վրանի կմախքը: Թուկը, վորի ծայրերով դուք կարել եք վրանների կողերը, ձգում եք ու կապում վրանի յերկու կողմից գետնին ամրացված ցցերին:

Թուկերը պետք է ամուր քաշել, վորպեսզի վրանը լավ ձգվի, ալլապես անձրևի ժամանակ




շուրը ներս կթափանցի: Ցցերը պետք է խփել սահմանված կար-

գով, վոր թե վայրիվերո, հակառակ դեպքում, առաջին իսկ քամուց նրանք կարող են դուրս թռչել: Ցիցը պետք է խփել միջակ թեքությամբ, ձգվող թուկի հակառակ կողմն ուղղած: Ցեթե չափազանց թեք խփվի, նրա ծայրը քիչ կմտնի հողի մեջ, ամուր չի լինի ու թեթև քամուց կպոկվի:

Վրանի քամու դիմաց գտնվող կողմը միշտ պետք է փակել:

Անձրևից ու ջրի հոսանքից պաշտպանվելու համար վրանի շուրջը փորվում եք փորիկ խրամ, իսկ փորած հողից վրանի շուրջը կազմում եք

59-59-59



հողաթմբեր: Յերբեք թույլ չպետք է տալ, վոր վրանի փեշերը մնան հողի վրա կամ կպչեն գետնին, այդպիսով վրանը շատ շուտ կփչանա: Վրանի փեշերը պետք է քիչ բարձր լինեն փորած առվից և ազատ:

Կարծես թե աշխատանքները վերջանում են, հիմա կարելի յե արդեն դուրս գալ լազեր: Բայց վոչ, դեռ չեն վերջացել և գործնական աշխատանքները նոր են սկսվում: Սկզբում ասացինք, վոր նախապատրաստական բոլոր աշխատանքները պետք է տանել ողակների միջոցով:

Բայց ինչպե՞ս:

Ահա այդ գործնական աշխատանքներն սկսվելու համար ել մենք տալիս ենք՝

ԿՈՆԿՐԵՏ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԼԱԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ

Ի՞նչ պե՞տք է անել

Հայաստանի կազմակերպությանն անցյալ տարի հաջողվեց միայն 1700 հոգի հանել լազեր: Վորպեսզի հնարավոր լինի այս տարի ավելի ևս կազմակերպված ձևով դուրս գալ լազեր, անհրաժեշտ է առաջին հերթին հաշվի առնել ձեր գավառում կազմակերպված լազերի անցյալ տարվա փորձը, նվաճումներն ու բացերը:

Ի՞նչպե՞ս անել այդ

Կողմակալի խորհուրդը, քննության առնե-

լով լազերի կազմակերպման գործը, ողակներին կարող է տալ հետևյալ առաջադրումներ.

Փորրերի. ողակին. — Իմանալ՝ թե անցյալ տարի քաղաքից վորքան մարդ է գնացել լազեր, և ինչ միջոցներով, իրենց կողմակալից քանի՞ հոգի յեն յեղել: Իմանալ նաև լազեր գնացողների հասակային կազմը, սոցիալական դրությունը, սեռը և այլն:

Միջակների ողակին. — Քանի՞ օր են մնացել լազերում և ինչպե՞ս են անցկացրել (հիշողություններ, տղավորություններ՝ այնտեղի աշխատանքներից, կոնկրետ փաստեր բացերից և այլն տեղեկություններ):

Մեծերի ողակին. — Քաղաքում մնացած հոկտեմբերիկները և պիոներներն ինչո՞վ ելին զբաղված, նրանց կապը լազեր գնացողների հետ:

Ստանալով այս առաջադրումները՝ յուրաքանչյուր ողակ աշխատանքի բաժանում է կատարում ողակի անդամների միջով և սկսում հավաքել այդ տեղեկությունները: Դրանք կարելի յե վերցնել պիոները շարժման կարիներից, Գավրյուրոյից, լազեր գնացող պիոներներից, կովարներից և հրահանգիչներից: Ողակները, առաջադրում կատարելուց հետո, իրենց յեզրակացություններն ամփոփում են և տալիս խորհրդին, վորից հետո կովարն ընդհանուր հավաքույթ է հրավիրում և զեկուցում անցյալ տարվա լազերի արդյունքների ու նոր կազմակերպելիք լազերի մասին:

Միանգամից լազեր դուրս գալ չի կարելի, դրա համար ել հարկավոր ե մի քանի նախապատրաստական եքսկուրսիաներ կատարել: Եքսկուրսիաների միջոցով հարկավոր ե մանրամասն ծանոթանալ յուրաքանչյուր պիոների բնավորութեանը, վարքին: Ավելի սերտ ընկերական շաղկապ, մտերմութիւն ստեղծելով բոլոր պիոներների միջև, հարկավոր ե այդ փորձնական աշխատանքների միջոցով ստուգել, թե վճիռ պիոները կարող ե լազեր գնալ, ինքնուրույն, առանց ծնողական խնամքի ապրել, գործնական աշխատանքներին մասնակցել և այլն:

Ի՞նչ ձեվով թանկ այդ աշխատանքները

Նախապատրաստական բոլոր աշխատանքները, վորոնք անհրաժեշտ են լազերի համար, հիմնականում բաժանվում են յերկու մասի. ա) սանիտարական (շուտափուլթ ոգնութիւն) և տեխնիքական գիտելիքներ և բ) հասարակական կարծիքի ստեղծում: Աշխատանքների այս յերկու ասպարեզները չպետք ե խառնել միմիանց հետ, այլ ողակների միջոցով աստիճանաբար նախապատրաստվել:

Առաջին հերթին հարկավոր ե բոլոր պիոներներին սովորեցնել շուտափուլթ ոգնութեան գործը. դրա համար կուլեկտիվի խորհուրդը բոլոր ողակներին կարող ե տալ առաջադրում՝ «սո-

վորել վերքերի փաթափման հասարակ ձևերը», վոր վերքը (գլխի, թևի վրա և այլն) վզկապով կամ մարլայով (թանգիֆ) ինչպե՞ս փաթաթել:

Ողակները կարող են, մի քանի հավաքույթի միջոցով, բժշկի, հրահանգչի և այլ կուլտուրական ուժերի ոգնութեամբ սովորել այդ բոլորը: Հետո կուլարը, ընդհանուր հավաքույթում, բժշկի ոգնութեամբ, ստուգում ե այդ բոլորը՝ անելով համապատասխան լրացումներ: Դրանից հետո խորհուրդը նորից հավաքվում ե և տալիս նոր առաջադրումներ բոլոր ողակներին—«Ինչպե՞ս վարվել խեղդվածի և ուշաթափվածի հետ», «Ինչպե՞ս վարվել թունավոր խայթվածքների հետ», ինչպե՞ս փոխադրել հիվանդին ձեռքերով, գավազանով», և այլն:

Այս բոլորն անցկացնելուց և սովորելուց հետո՝ ողակները պարտավոր են գրել և նկարել իրենց հուշատետրերում և կուլեկտիվի թերթում: Վերջում, ընդհանուր հավաքույթում ամփոփելուց հետո, յեթե պիոներներն այդ բոլորը լավ չեն յուրացրել, հարկավոր ե վորոշ կրկնողութիւններ անել: Իսկ յեթե յուրացրել են, այն ժամանակ կարելի յետալ նոր առաջադրում բոլոր ողակներին, այս ագամ պիոներական գիտելիքներին:

Բոլոր ողակներին.— Ինչպե՞ս և վորտեղ կարելի յե խփել վրանները, գավազաններից ինչպե՞ս ձողեր և կամուրջ պատրաստել: Ինչպե՞ս

պատրաստել գետնափոր հացասեղաններ, ինչպէս պատրաստել լապտեր և ծառերի ճյուղերից կախարաններ (վիշելկա):

Ողակները գործնական մի քանի հավաքույթներին, եքսկուրսիաներին միջոցով սովորում են այս բոլորը:

Այս բոլոր առաջադրումներն ավելի հետաքրքիր և բազմակողմանի դարձնելու համար՝ չպետք է մոռանալ նաև հավաքույթի մյուս ելեմենտները—խաղերը, յերգերը, մարզանքները և ընթացիկ աշխատանքները: Բացի այդ, յուրաքանչյուր պիոներ, ողակ պետք է աշխատեն այս բոլոր աշխատանքներին տեղյակ պահել ծնողներին: Իրա համար ել լավ կլինի, վոր պիոներները պատրաստած իրերի և սովորած գիտելիքների մասին խոսեն ընտանիքում, իրենց բախում և բացատրեն ծնողներին, վոր իրենք պատրաստվում ենք լազերի:

Ս. Երևան 1926 թ. 2-րդ մասը

Լազերային գիտելիքներով զինվելուց հետո, բոլոր ողակները և պիոներներն իրենց աշխատանքների ընթացքն ուղղում են դեպի ընտանիք, զրամական-նյութական միջոցներ և անհրաժեշտ իրեր ձեռք բերելու համար: Վորպեսզի այդ բոլորն ավելի կազմակերպված ձեւով լինի, կուլեկտիվի խորհուրդն ողակներին տալիս է նոր

առաջադրումներ՝ ծնողական հավաքույթի համար:

Մեծերի ողակին.—Պատրաստել մի փոքր բեմադրություն. ցանկալի յե լազերային կյանքին վերաբերող:

Միջակների ողակին.—Պատրաստել ծնողների համար հրավիրատոմսեր և մի քանի կենդանի նկարներ՝ բանակային կյանքից (գիշերը խառույկի շուրջը զրուցելիս, բանակային աշխատանքների ժամանակ և այլն):

Փոքրերի ողակին.—Հավաքել բոլոր ողակներից անցած առաջադրումների արդյունքները, նկարները, պիտույքները, լազերին անհրաժեշտ իրերը, ողակների ունեցած հուշատետրերը, կուլեկտիվի թերթերը և՛ մյուս ողակների ոգնությամբ՝ այդ յերեկույթում կազմակերպել ցուցահանդես՝ ծնողներին ծանոթացնելու համար այդ բոլորին:

Այդ բոլոր աշխատանքները կատարելուց հետո հավաքվում են ծնողները, և կուլվարը զեկուցում է տալիս լազերի կազմակերպման և ծնողների անելիքների մասին: Վերջում տեղի յե ունենում կուլեկտիվի կազմակերպած յերեկույթ:

Խորհուրդներ կուլվարին

Այս բոլորն անցկացնելու համար նախ պետք է կուլվարը և բազմաթիվ պատրաստվեն և խոր-

հըրդի միջոցով պատրաստեն ողակավարներին. ապա պետք է, առանց խառնելու, հերթով անցկացնեն բոլոր առաջադրումները, հաշվի առնելով նախորդը:

Եթե կուրսիաների և փորձնական աշխատանքների ժամանակ կուլվարը պետք է լավ ծանոթանա պիոններների բնավորության գծերին և համապատասխան մոտեցում սահմանի: Կուլվարը, բազմաթիվ հետ միասին, պետք է պայմաններ ստեղծի (գրականութուն և այլն) ողակների համար՝ նյութերը լրիվ անցկացնելու, և վերջում ստուգի այդ բոլոր աշխատանքները: Բացի այդ, կուլվարը կարող է, տեղական պայմանների և պիոնների պահանջների համեմատ, առաջադրութունները փոխել, նորը կազմել, ավելի կոնկրետացնել և այլն:

Կուս. յեվ ԼԿՅԵՄ ԲՅԻՋՆԵՐԻ ԱՃԵԼԻՖՆԵՐԸ

ԼԿՅԵՄ ԲՅԻՋԸ, Կուս. ԲՅԻՋԻ հետ միասին, պետք է աշխատի պրոֆմիության տեղկոմի, հիմնարկության վարչության, աշխատակիցների և այլնի միջոցով հասարակական կարծիք ստեղծել պատանիների առողջացման համար, ստեղծել բոլոր պայմաններ (դրամական, փոխադրական միջոցներ, վրաններ և այլն) լազերի կազմակերպման համար:

ԼԿՅԵՄ ԲՅԻՋԸ պետք է ոգտագործի բոլոր

ուժերին՝ բժշկին, ուսուցչին, գյուղատնտեսին, ձեռնարկության մեջ աշխատող բանվորներին և այլն, վորպեսզի ողակներում, կուլեկտիվներում անցկացվեն այդ առաջադրումները և պիոնները սովորեն վերը հիշված բոլոր սանիտարական և տեխնիքական գիտելիքները:

Այս բոլոր աշխատանքները հաջող կազմակերպելու համար Կուս. ԲՅԻՋԻ կից կազմակերպվում է մի կոմիտե, վորը վարում է լազերի հետ կապված հիմնական աշխատանքները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽԱՇՎԵԱՌՈՒՄԸ

Այս բոլոր աշխատանքները յերկար ժամանակ են պահանջում, յերկու—յերեք ամիս: Հարկավոր է կատարած բոլոր աշխատանքների մասին ժամանակին գրել հուշատետրերում, թերթում, պատրաստած իրերից կազմել մի ցուցահանդես և այլն, վորպեսզի հնարավոր լինի գործնական աշխատանքի արդյունքներն ավելի ամփոփել և ժառանգականացնել:

ԽՈՋ ԱՃԵԼ ԻՆՏԱԳԱՅՈՒՄ

Միայն այս աշխատանքների հաջող կազմակերպմամբ է, վոր հնարավոր է ավելի հաջող, վաղորոք կազմակերպված ձեվով դուրս գալ լազեր: Այս աշխատանքները վերջացնելուց հետո՝ հարկավոր է կուլեկտիվի պիոններներին յենթար-

կել բժշկական քննության, անել համապատաս-
խան ընտրություն և դուրս գալ լազեր: Ի հար-
կե չպետք ե ժողանալ նաև վաղորդք մշակել
լազերի ներքին դաստիարակչական և հաս-
քաղաքական աշխատանքներին վերաբերող համա-
պատասխան ծրագրեր:

ԳԼՈՒԽ II.

ՄԻ ՔԱՆԻ ԱՆՅՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ


Նախապատրաստական ընդհանուր աշխա-
տանքների հետ միասին մի շարք խնդիրներ
կան, վորոնց պիտներները պետք ե ծանոթա-
նան դեռ լազեր դուրս գալուց մի քանի ամիս
առաջ: Փորձնական եքսկուրսիաների և զբոսանք-
ների ժամանակ բազմաթիվ աշխատանքներ
կան, վոր պետք ե նախապատրաստել: Որ. ին-
պե՞ս վրան խփել, խարույկ վառել, գավազանից
ոգտվել և այլն. սրանք ունակություններ են,
վոր պետք ե ձեռք բերել դեռևս քաքաքում յե-
ղած ժամանակ: Այսպիսի գիտելիքներ չիմացող
պիտներները կարող են դժվարությունների հան-
դիպել. ուրեմն այժմվանից սկսենք նախապատ-
րաստվել լազերային աշխատանքներին: Վորպեսզի
կարողանաք այդ բոլորը սովորել, հարկավոր ե
ճարպիկ լինել, կպչել աշխատանքներին և սիրել
գործը: Աշխատանքների հաջող կազմակերպումը
կախված ե նաև ձեր ճարպիկ և հնարագետ լի-
նելուց, դրա համար ել մենք գալիս ենք ձեզ
ոգնելու:

Առաջին հերթին պետք ե իմանալ, թե՛

ԻՆՉՊԵՍ ՈԳՏՎԵԼ ԳԱՎԱԶԱՆԻՑ

Գավազանը — պատանի պիոներների խաղաղ գենքն է: Զբոսանքների, եքսկուրսիաների և լազերի ժամանակ լավ պիոներները յերբեք չպետք է բաժանվի գավազանից, մանավանդ ճանապարհորդութան ժամանակ դա շատ կարող է ոգնել: Փորձված պիոներների ձեռքին գավազանը մեծ դեր կարող է խաղալ, ոգնելով նրան վորպես ընկեր:

Եքսկուրսանտը ճանապարհ քայլելիս կարող է հենվել գավազանին: Ճանապարհին մի առավակ կամ փոս պատահելիս պիոները՝ հենվելով գավազանին՝ կարող է հեշտությամբ թռչել: Գիշերը կարող է գավազանով շոշափել ճանապարհը:



Յեթե հանկարծ կարիք զգացվեց մի վորյեվե բան չափելու — գետի խորությունը, բլրակի, ցանկապատի բարձրությունը, գավազանը կօգնի պիոներին:

Վորպեսզի այդ չափումները ճիշտ կատարվեն, հարկավոր է գավազանի վրա գծումներ կատարել, սանիտիմետրի կամ դույմի մեծությունամբ:

Հարկավոր է հանգցնել խարույկը, գավազանի միջոցով կարելի չէ ցրել կրակը և անմիջապես կատարել աշխատանքը: Ճանապարհորդության ժամանակ պիոներները կարող է հանկարծ գլորվել փոսը, գավազանով կարող է հենվել փոսի յերկու կողմերի վրա և սպասել մինչև ընկերոջ ոգնելը, կամ գավազանի ոգնությունամբ կարող է բարձրանալ:

Յերկար ճանապարհորդության ժամանակ պիոներները հոգնում են, ցանկանում են ստեղծել, հանգստանալ, բայց գետինը խոնավ է և ճանապարհը կեղտոտ, — գավազանն այստեղ կարող է ավտոմատ եղ ծառայել:



Պիոներների վրա հանկարծ հարձակվում են շները, նա կարող է իր գավազանով պաշտպանվել:

Իսկ յերբ միասին հավաքվում են մի քանի պիոներներ, գավազաններով կարելի չէ պատրաստել վրանների կմախքը, վորը ծածկելով

գերի ժամանակ, Շատ դժվար է թվել այն բու-
լորը, ինչ կարելի չէ անել գավազանով: Գավա-
զանի ոգտագործումը կախված է պիոնների ճար-
պիկութունից, հազար ու մի տեսակ տեղ դա-
կարող է պետք գալ, միայն թե հարկավոր է
ոգտագործել իմանալ:


Մեզ մոտ յեղած նիզակները չեն կարող ա-
նել այն ամենը, ինչ վոր կանեն գավազանները:
վերեվ թված աշխատանքները կատարելու ժա-
մանակ նիզակներն անմիջապես կարող են կո-
տրվել: Նրանք միայն ցուցադրական դեր կարող
են խաղալ: Դրա համար էլ հարկավոր է ձեռք
բերել վոչ թե նիզակներ, այլ գավազաններ:
Գավազանն է միայն, վոր կարող է պիոնների
հետ դիմանալ այդ աշխատանքներին. պետք է
հրաժարվել նիզակներից: Պիոններն եքսկուր-
սիա, լագեր զնալիս անպայման իր հետ պետք
է վերցնի գավազան: Դրա համար էլ այժմյանից
յուրաքանչյուր ողակ, կոլլեկտիվ ու պիոններ
պետք է մտածեն գավազաններ ձեռք բերելու
մասին:

ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ

Մի քանի գավազաններ միմիանց կապելու,
կամ վրանների պարաններն ամրացնելու հա-
մար, հաճախակի պիոններները յերկար չարչար-

վում են, ժամանակ կորցնում, յերբեմն էլ նպա-
տակին չեն հասնում: Ընդհանրապես եքսկուր-
սիայի, լագերի ժամանակ պիոնները հաճախ
ստիպված է լինում ամեն ինչ ինքն անել, իր
սեփական ստեղծագործությանը դիմել: Ձեռքի
տակ գտնված նյութերից — պարանից հանգույց-
ներ կապելը մեծ արհեստ է:

Շատ անգամ, անտառում պիոններներին
պետք են գալիս այդպիսի հանգույցներ՝ ծա-
ռերը բարձրանալու, ծառերից իջնելու, իրերը
կապելու համար և այլն: Այդպիսի հանգույցներ
պետք են գալիս նույնպես հրդեհի ժամանակ՝
վտանգվածներին ցած իջեցնելու համար: Հան-
գույցներն անհրաժեշտ են նաև հետախուզության
ընթացքում, յերբ գետի վրայից անցնելու հա-
մար հարկավոր է կամուրջ կապել: Վերջապես
հանգույցներ պատրաստել իմանալը փրկել է
շատ հեղափոխականների կյանքը՝ ազատելով
նրանց բանտից: Բազմաթիվ այլ պարագաներում
կարող են պետք գալ այդպիսի հանգույցներ,
հարկավոր է սովորել զրանք պատրաստել:



Այս հանգույցներից ամենամանրագիշտը 4-ն են, մնացածները կարելի յե և չիմանալ, բավական ե միայն այդ հանգույցներից իմանալ № 1, 4, 8, 9:

Այդ 4 հանգույցները հետևյալ նպատակների համար են ոգտագործվում:—

№ 1. Յերկու պարան իրար հետ ամուր կապելու համար.

» 4. Պարանը գերանին կամ ծառին ամրացնելու համար.

» 8. Պարանը կարճացնելու համար, առանց կտրելու.

» 9. Սլացող կապ.


Լավ կլինի, վոր այժմվանից փորձեք վարժվել այդ կապերը գործադրելուն:

ԽՆՐՈՒՅԿՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿԸ

Յենթադրենք եքսկուրսիա եք գնացել, վրանները խփած պատրաստ են, ներսը մաքրել և դասավորել եք. հարկավոր ե մտածել կրակի և կերակուրի մասին. պետք ե խարույկ վառել, թեյ տաքացնել կամ կերակուր յեփել: Դրա համար անհրաժեշտ ե իմանալ խարույկ վառելը, վառելու ձեվերն ու կանոնները: Նախ՝ խարույկը պետք ե վառել վրանից քիչ հեռու և այնպես, վոր ծուխը ներս չլեցվի, և յերկրորդ՝ խարույկը

պետք ե միշտ ձեր աչքի առջ լինի: Չմոռանաք մաքրել կամ այրել խարույկի չորս կողմի խոտերը, հրդեհի վտանգից ազատ լինելու համար:


Կան խարույկ վառելու շատ ձևեր, բայց մենք տալիս ենք միայն մեկը: Վերցնում եք բահ կամ քլունդ, փորում եք մի խրամ (փոս)՝ կես մետր լայնությամբ, քառորդ մետր խորությամբ և մեկ ու կես մետր յերկարությամբ. կարելի յե նաև ավելի փոքր պատրաստել: Փոսի յերկարությամբ, յերկու կողմից շարում եք քարեր, թողնելով միայն յերեք քառորդ մետր տարածություն, մնացած մասը ծածկում եք քարերով և հողով՝ այնպես, վոր ստացվի մի անցք.



Բաւակայիւ ուղախ

բաց թողած մասում վառում եք խարույկը, ուր և տեղավորում եք կաթսաները: Այս ձևի խարույկը բավական լավ կարող ե վառվել, քանի վոր ունի առանձին ողանցք:

Կան նաև բազմաթիվ այլ տիպի խարույկներ, վորոնք կարելի յե պատրաստել տեղում յեղած հնարավորությունների ու պայմանները համեմատ. ահա դրանցից մի քանիսը (նկարում):



Այստեղ
անհրաժեշտ
ե տալ նաև
խարույկի մի
այլ ձևը, վորը
հարկավոր ե
զխավորա-
պես վոչ

թե ճաշ կամ թեյ պատրաստելու, այլ գիշերային զրույցների ու պահակների տաքանալու համար: Դրա համար պետք ե նորից գետինը փորել, այս անգամ շրջանաձև, մոտավորապես 10 սանտիմետր խորությամբ և յերեք քառորդ մետր լայնությամբ: Կավ կլինի այդ փոսը փորել զոգանման, այսինքն կենտրոնն ավելի խոր անել քան ծայրերը: Յերը փոսը պատրաստ ե, կարելի յե ցախեր դարսել և մի քանի գերաններ ել կողքից դասավորել. ցախերն այնպես պետք ե դարսել, վոր քամին կարողանա փչել արանքներում: Կավ դասավորված խարույկը շատ լավ կարող ե վառվել:

Գիշերները սովորաբար հարկավոր ե խարույկը ծածկել մոխրի բարակ շետով, վորպեսզի հնա-

րավոր լինի կրակն ավելի յերկար ժամանակ պահել: Առավոտյան կարելի յե ծխացող փայտերը նորից բորբոքել, մի քանի չոր ճյուղեր ավելացնել և այդպիսով խարույկը նորոգել:

Սարույկները պատրաստելիս ընդհանրապես պետք ե շատ զգուշ լինել՝ հրդեհ հառաջացնելու համար, զգուշ պետք ե լինել մանավանդ քամու ժամանակ:

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԳԵՏԵԱՓՈՐ ՀԱՅԱՍՏԵՂԱՆ

Սարույկը պատրաստ ե, կերակրի կաթսաները յեռում են, թվում ե, թե այդ ե բոլորը, վոչինչ չի մնացել անելու: Բայց վոչ, դեռ կան մի շարք ուրիշ աշխատանքներ: Դրանցից առաջինը հացասեղանն ե: Անտառում կամ երբեք ուրիշ տեղի մի այլ տեղում կոլլեկտիվին վոչ վոք պատրաստի սեղան չի տալիս, հարկավոր ե պատրաստել այդպիսին. յեթե տախտակներ չկան, ուրեմն հարկավոր ե գետնափոր անել: Դրա համար պետք ե մի լավ հարթ տեղ ընտրել, վորն արևից պաշտպանված լինի, գծել քառակուսի, ձվանման կամ յեռանկյունի հատակագիծ՝ մի քանի մետր յերկարությամբ և մի քառորդ մետր լայնությամբ, նույնքան ել խորությամբ փորել՝ փոքերը տեղավորելու համար: Մեջտեղը կմնա ազատ թուփ, վորը կարելի յե ոգտագործել վորպես հացասեղան:

Յերեանի լազերային մի քանի տարվա փորձը ցույց տվեց, Վոր այդ շատ հեշտ գործ է և յուրաքանչյուր ողակ կարող է հեշտությամբ պատրաստել այդպիսի սեղան:

Այս աշխատանքներին զուգընթաց, հարկավոր է մտածել նաև լազերի սանիտարական աշխատանքների մեկ ուրիշ կողմի մասին, դա զուգարանն է: Հարկավոր է, նախքան լազեր պատրաստելը, 50—100 քաջ հեռավորության վրա մի փոս փորել՝ յերկու մետր յերկարությամբ, քառորդ մետր լայնությամբ և յերեք քառորդ մետր խորությամբ: Ամեն որ, գործածելուց հետո, պետք է ծածկել հողի բարակ շերտով և կրաշուր ամել վրան:




Փորված-
քից առաջ
յեկած հո-
ղը հար-
կավոր է

հավաքել մի տեղ, լազերից կամ եփսկուրսիայից վերադառնալիս՝ փոսն ամբողջովին ծածկելու համար: Բացի այդ, անհրաժեշտ է, ըստ հնարավորության, զուգարանի 4 կողմը ցանկապատել ծառի ճյուղերով, բարերով կամ այլ իրերով:


ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՔՆԵԼՈՒ

Եփսկուրսիայի և զբոսանքի ժամանակ դեռևս հնարավոր է մի քանի ժամով քնել առանց անկողնի, չոր գետնի վրա կամ խոտերի մեջ: Բայց լազերում 20 որ, մի ամիս շատ դժվար է այդ դրությամբ ապրել, այդպիսով կարելի չէ մրսել և հիվանդանալ: Դրա համար ել հարկավոր է վաղորդ պատրաստել ներքնակ և փոքրիկ բարձ: Շատ հեշտ է դրանք պատրաստել. կարելի չէ հասարակ քաղաքից կամ այլ կտորից կարել առանձին տոպրակներ բարձի և ներքնակի համար, լցնել խոտով ու այդպիսով ապահովվել ագերային անկողինով:




Յերեանի լազերում, որին նաև պատրաստել եյին վոչ միայն ներքնակ ու բարձ, այլ նաև մահճակալներ՝ վրա նի մեջ, յերկու կողմից կես մետր բարձրությամբ, ծածկված ծառի չորացրած ճյուղերով և խոտով:

Դրանք մոտավորապես այսպես եյին (նկար)՝



Մահճակալ կարելի չէ պատրաստել նաև ուրիշ ձևով: Յեթե չորացած ճյուղեր, ճիպտաներ և այլն չկան, այն

ժամանակ հարկավոր ե մի քանի ցից խփել գետնին՝ ըստ ձեր ցանկացած բարձրության, հալառակ կողմերը կապել բարակ պարանով և խոտերով գործել, ահա այսպես (տես նկարը)։



յերեք որ մի անգամ անկողինը դուրս բերել արևի տակ, լավ չորացնել ու մաքրել, յեթե վոչ կեղտերը մաքրելու, գոնե խոնավությունը վերացնելու համար։

ՔՆԱԾ ԺԱՄԱՆԱԿ ԻՆՉՊԵՍ ԶԳՈՒՇԱՆԱԼ ԶԱՆԱԶԱՆ ԽԱՅԹՈՒՄՆԵՐԻՅ

Քնած ժամանակ ոձերից ապահով լինելու համար, հարկավոր ե քնելու ժամանակ շուրջը, գետնի վրա գցել մազերից հյուսված թուկ։ Ոձն ընկնելով այդ մազի վրա, չի կարող առաջ գալ։ Ոձը չի կարող տանել նաև մախորկայի հոտը, շաղ տվեք ձեր շուրջը մախորկա, յեթե քնում

Մահճակալ կամ անկողին պատրաստելը, իհարկե, գեռ բոլորը չի, հարկավոր ե նաև մտածել նրա մաքրության մասին։ Դրա համար ել լավ կլինի յերկու

եք մի աշնալիսի տեղ, վորտեղ կարող են թռնավոր ոձեր լինել։

Կարիճներից խուսափելու համար հարկավոր ե քնել վոչխարի կամ այլ մորթի վրա։

ԻՆՉՊԵՍ ՏԱՔԱՆԱԼ

Տաքությունը կարելի յե պահպանել ամենահասարակ միջոցով։

Հարկավոր ե գտնել միայն մի աշնալիսի նյութ, վորը տաքություն քիչ ե անցկացնում։ Այդպիսի մի նյութ ե ներկայացնում իրենից լրագրի թուղթը։


Շատ անգամ զինվորները զիրքերում, գուլպաների վրայից, վոտներին փաթաթում են լրագրի թուղթ և ապա հագնում կոշիկները։ Բացի վոտքերը տաքացնելուց, յեթե լազերում տաք հագուստ չունեք, ցուրտ գիշերներին փաթաթվեցեք լրագրի թղթերով և այդպիսով վորոշ չափով կտաքանաք։

Բացի դրանից, կարելի յե քնել նաև չոր խոտի մեջ, վորտեղ նույնպես տաք կլինի։ Մանավանդ աշնանային գիշերներին վրանների կամ շալաշների 4 կողմը պատեցեք դարմանով կամ խոտով, այդ դեպքում վրանում բավականին տաք կլինի։

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԼԱՊՏԵՐ

Առանց լուսավորության վոչինչ չի կարելի անել, մանավանդ լազերային կյանքում։ Մուլթ

անտառում, կամ գյուղից վերադառնալիս, յեթե ճանապարհն ել ծանոթ չի, շատ դժվար կլինի կատարել վորևե աշխատանք: Անհրաժեշտ ե, վոր գոնե յուրաքանչյուր ողակ ունենա մի ևս պատեր: Յեթե պատրաստի լապտեր չեք կարողանում գնել, այն ժամանակ պետք ե ինքներդ պատրաստել, դա շատ հեշտ ե: Կարելի յե մի քանի ձեւի լապտեր պատրաստել, ահա դրանցից մի քանիսը.



Սրանցից առաջինը սովորական լապտեր ե՝ թիթեղից պատրաստած, վորը կարելի յե պատրաստել՝ յեթե ունեք անհրաժեշտ գործիքներ, բայց յերկրորդ տեսակը կարելի յե առանց գործիքի ել պատրաստել: Վերջնում եք մի վորևե շիշ, կեսից կտրում ե նեղ մասում հագցնում մոմը, հետո վերցնում եք ծառի մի ճկուն ճյուղ, ծալում յերկու ծայրերը, կապում միմիանց ե կտրված շիշը հագցնում ղեշը, այնուհետե պատրաստի այդ լապտերը կարող եք կախ տալ ձեր ցանկացած տեղից:

Շիշը կարելի յե կտրել թելով (շալակառ), վորը կփաթաթեք շի վրա ե ձեր ցանկացած տեղից մի քանի անգամ տանել բերելուց հետո,


սառը ջուր կլցնեք վրան ե շիշը կբաժանվի յերկու մասի:

Կարելի յե նաև ուրիշ կերպ անել.— շիշ մեջ կլցնեք ջուր, ինչ բարձրության վրա ցանկանում եք, մի քիչ կտաքացնեք ե շիշը ջրի մակերեսի բարձրությունից կճեղքվի:

ԿԱՆԱՐԱՆՆԵՐ

Ձի կարելի, մանավանդ լագերային կյանքում, շորերը, իրերը թափթփել այս ու այն կողմը. այդպիսով վոչ միայն կարելի յե կորցնել իրերը, այլև կեղտոտել: Լագերում ծնողներ չկան, վորպեսզի ամեն ըուպե հավաքեն ձեր թափթփած իրերը, մաքրեն, դասավորեն ե այլն, այդ ամենն ինքը պիտները պետք ե անի. դրա համար ել անհրաժեշտ ե վորոշ հարմարություններ ստեղծել իրերի դասավորման համար:


Այդ նպատակով վերցնում եք ծառի ճյուղեր, կտրտում ե պատրաստում կեռանման կախարաններ:



Այդ կախարանները կարելի յե մի վորևե սյունի կամ ծառի խփել, թելերով կապել կախ տված գավազանից ու այդպիսով բոլոր շորերը դասավորել:

ՍԵՂԱՆ ԿԱՄ ԴՐՔԱԿԱԼ


Մնացած իրերը տեղավորելու համար հարկավոր է թեթև կահավորութիւն. քիչ ծախսով անմիջապէս կարելի յէ կահավորել վրանը, կարմիր անկյունը, խոհանոցը և այլն: Կահավորութիւն հետո, կարելի յէ շատ շուտ հավաքել: Փոքրիկ սեղան և գրքակալ կարելի յէ պատրաստել այսպէս.



Վերցնում եք տախտակներ, ամրացնում ձողերին ծղնիներով (պետլիա), իսկ զիմացի անկյունից կապում բարակ պարանով, վոր յերբ ուզենաք կքաշեք և տախտակները կհավաքեք: Այս ձևի գրքակալը և սեղանը կարելի յէ ամրացնել ծառից կամ վրանի սյունից:

Ա. Վ. Ե. Լ.

Ավել կամ ցախավել շատ հեշտութեամբ կարելի յէ պատրաստել երսկուրսիայի ժամանակ կամ լազերում: Մաքրութեան համար անհրաժեշտ է գոնէ մի քանի անգամ որեկան մաքրել դաշտը կամ վրանները: Կարիք չկա,



վոր քաղաքից հետներդ ավել տանեք լազերը: Վերցնում եք ծառի բարակ ճյուղեր, իսկ յեթե անտառը հեռու յէ՝ չորացած խոտեր և դրանցից այս ձևով պատրաստում եք ավել:

ԻՆՉՊԵՍ ՀԵՇՏ ԿԵՐՊՈՎ ՓՈԽԱԴՐՈՒԹ ՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ

Լազերային կյանքում հաճախ հարկավոր է լինում արագ կերպով մի վորեւ իր տեղափոխել, որինսակ, քարեր՝ վրանի չորս կողմը պատրաստելու համար, մթերք կամ ջուր՝ ճաշի համար և այլն: Սակայն կարող է ճանապարհն ախպես լինել, վոր հնարավոր չլինի անհատ պիտանքների միջոցով այդ տեղափոխութիւններն արագ կերպով կատարել: Յենթադրենք հարկավոր է շտապ կերպով կաթսաները լցնել ջրով, կամ թե մի վորեւից տեղում առաջացած հրդեհը հանգցնել: Այստեղ ողակը և կոլլեկտիվը

միացյալ ուժերով ու շատ արագ այդ աշխատանքը կարող են կատարել, ահա մոտավորապես այսպես.



Կոլլեկտի-
վի պի-
ն է ը ը
կանգնում
են շարքի

միմիանցից վորոշ հեռավորությամբ և դույլերը հերթով միմիանց տալով՝ կատարում այդ աշխատանքը:

ՁՈՒՐ ԶԹԱՓԱՆՅՈՂ ԿՏՈՐ ՅԵՎ ԿՈՇԻԿ

Վորպեսզի իրերը ջրից չթրջվեն, հարկավոր է բերված պարաֆինը լուծել բենզինի կամ սպիրտի մեջ և այդ լուծվածքը փափուկ վրձինով մի բանի անգամ քսել կտորի յերկու կողմերը:

Նույնը կարելի չէ անել նաև կոշիկների նկատմամբ և վորքան հաճախ՝ այնքան լավ: Աշխատելով վորպեսզի կաշին նույնպես ջուր չծծի, դուք վերցնում եք նույն այդ լուծված պարաֆինը, քսում կոշիկի վրա, հատկապես կարված տեղերին:

Կտավը և քաթանը կարելի չէ ջրից անթափանցելի դարձնել նաև այլ միջոցով. — վերցնում եք դրանք թրջում սովորական սապո-

նի ուժեղ լուծվածքով, կտավը կամ քաթանն այդ լուծվածքով լավ ծծեցնելուց հետո, քամում եք և չորացնում, վորից հետո և ստանում անթափանցելի կտոր, վորը չի թրջվում:

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԱՂԸ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆՆԻՅ

Աղը շատ հեշտությամբ խոնավություն է ընդունում և թրջվում: Հարկավոր է ծեծված աղին ավելացնել 8—10 % ծեծված նիշաստա (կրախմալ), վորը չի վնասում անդին և պահպանում է աղը խոնավությունից: Այսպիսի դեպքում, նույնիսկ խոնավ ոգում, դուք կարող եք չորացրած աղ ունենալ:

ԼՈՒՑԿԻՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ԶԵՆ ՎԱՆԵՆՈՒՄ ԶՐԻՅ

Հարկավոր է լուծել պարաֆինը և իջեցնել նրա մեջ լուցկիները, ապա լուցկիները մեկ-մեկ դուրս հանել, քորոցով ավելորդ պարաֆինը մաքրել. նա շատ շուտով չորանում է: Այդպիսի լուցկիները կարող են թրջվել և բոլորովին չփչանալ: Յերբ լուցկին կբսեք լուցկու տուփին, այն ժամանակ պարաֆինն ինքն իրեն կտարվում է, լուցկին վառվում և նույնիսկ կաւորողանում է դիմանալ քամուն:

ԳԼՈՒԽ III

ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՄԵՐ ՌԻՆԵՑԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԸ

Դեռևս 1927 թվի սկզբներին, Համամիութենական Պիոներական Կենտրոնությունը կողմից պիոներներին ուղղված հրահանգը՝ պատերազմի վտանգի ու յերկրի պաշտպանությունից վերաբերյալ՝ ասում է.

«Պիոները գեռ փոքր է: Նա չի կարող հրացանը ձեռքին պաշտպանել Խորհրդային Միության սահմանները: Նա չի կարող մասնել Կարմիր բանակի շարքերը և՛ իր հայրերի ու մեծ յեղբայրների հետ՝ յետ մղել թշնամու հարձակումը:

Բայց պիոները կարող է ոգնել յերկրին՝ պաշտպանվելու համար: Ինչքան ամուր լինի մեր յերկիրը, փորքան լավ ամրապնդենք արդյունաբերությունն ու գյուղական տնտեսությունը, փորքան զրազեա լինենք մենք — այնքան հեշտ կլինի մեզ համար պատասխանել կապիտալիստների փորձերին, պաշտպանել բանվորների և գյուղացիների իշխանությունը:

Պատանի Պիոներների Կենտրոնական Բյու-

րոն ԽՍՀՄ-ի բոլոր պիոներներին տալիս է հրահանգ.

— Խորհրդային յերկրի համար այս ծանր ժամանակներին, գինվորական վտանգի այս մոմենտին — **ՊԻՈՆԵՐՆԵՐ, ՅԵՂԵՔ ՊԱՏՐԱՍ:**

Յուրաքանչյուր պիոներ պետք է լինի պատրաստ՝ կատարելու հետևյալը.

1. Լինել ղեկավարինար, ճշտապահ յեվ կատարող. կատարիւր այն բոլոր առաջադրությունները, վոր տրվում են բեզ:

2. Լինել առաջինը՝ աշխատանքային գործունեություն մեջ՝ քաղաքում, գյուղում՝ գյուղատնտեսությունից բարձրագման մեջ. հայտնաբերել նախաձեռնություն ամեն մի հասարակական գործում:

3. Ուշադրությամբ կարդալ պիոներական թերթերն ու հանդեսները, աշալուրջ կերպով հետեվել մեր լճնամիների բոլոր գործողություններին, մեր լճնամիների փորձերին, վորոնք նպատակ ունեն Խորհրդային Միությունը պատերազմի սեջ գցել:

4. Կոիել որգանիքմը, միշտ առողջ լինել:

5. Կարողանալ առաջին ոգնությունը ցույց տալ դժբախտ դեպքերում:

6. Իմանալ շարք կանգնելը, տեղազրությունը յեվ նշանախոսությունը:

7. Մասնակցել հրաձգային խմբակներին, իժանալ քիմիական պաշտ զանություն կանոնները,

տարածել պլաներային գործը, գարկ տալ ոսդիո-
սիրողների գործունեութանը:

8. Ուշադրութուն դարձնել սիրել յեզ հոգ
տանել Կարմիր Բանակին:

9. Ուժեղ կապ պահպանել ամբողջ աշխարհի
պատանի պիոներների հետ:

Այս ուղղությամբ, իհարկե, Հայաստանի
պիոներական կազմակերպությունը կատարել է
մի շարք գործնական աշխատանքներ: Մասնա-
վորապես անցյալ տարվա լազերի ժամանակ
նկատվեց այդ աշխատանքների աշխուժությունը
և պիոներների հետաքրքրությունը դեպի ռազ-
մական գիտելիքները:

Զմեռվա ընթացքում, կոլեկտիվներից շա-
տերը, գուրկ լինելով ակումբներից, տեխնիքա-
կան ու նյութական հնարավորություններից,
դեռևս պետք չեղած չափով չեյին կարողանում
կազմակերպել այն աշխատանքները, ինչ վոր
պահանջում էր Համամիութենական Կենտրոնա-
կան Բյուրոն: Սակայն ամառային աշխատանք-
ների սկսվելու հետ միասին, այդ դժվարություն-
ները մասամբ վերացվում են և ավելի լայն
հնարավորություններ են ստեղծվում՝ պիոներ-
ական ընդհանուր աշխատանքների մեջ վորոշ
ռազմական ելեմենտներ մտցնելու և՛ այդպիսով՝
պիոներական աշխատանքները ռազմականացնե-
լու համար: Այդ աշխատանքներն ավելի հաջող
կարելի կլինի կազմակերպել լազերային կյան-

քում: Իհարկե, յերբեք պիոներական կազմա-
կերպության ռազմականացման աշխատանքները
չպետք է նմանեցնել մեծերի, բանակի աշխա-
տանքներին, այս տեսակետից ել յերբեք պիո-
ներական լազերները չպետք է կառուցել ռազ-
մական ձևով, զինվորական լազերի նման: Հար-
կավոր է ռազմականացման այնպիսի աշխա-
տանքներ կազմակերպել, վորոնք հետաքրքրում
են պատանիներին և համապատասխանում նը-
րանց հասակին ու բնական առանձնահատկու-
թյուններին:

Հայաստանի պիոներական կազմակերպու-
թյունն այս ուղղությամբ աշխատանքների բա-
վականին հաջող փորձ ունի: Ինչպես Յերևանի,
Նույնպես և Լենինականի անցյալ տարվա լա-
զերներում կազմակերպված էյին ռազմական
գործն ուսումնասիրող մի բանի խմբակներ (մո-
դելիստների, առաջին ոգնության, նշանախո-
սության, հրաձգային, նետ ու աղեղավորների,
և այլն). սրանց գուզընթաց, կազմակերպվել են
զանազան զրույցներ՝ պատերազմի վտանգի,
յերկրի պաշտպանության վերաբերյալ ու մաս-
սայական խաղեր: Պիոներները մեծ վոզեվորու-
թյամբ մասնակցում էյին այդ աշխատանքնե-
րին: Դրանցով վոզեվորվում էյին վոշ միայն
պիոներները, այլ և կոլվարներն ու պիոներ աշ-
խատողները, և իրոք, պիոներական աշխատանք-
ների մեջ ռազմականացման ելեմենտներ մըտ-

ցնելը խոշոր աշխուժութիւնն առաջ բերեց: Աշխուժացումն հետաքննելու եր մանավանդ մասսայական խաղերի ժամանակ (չինական հեղափոխութիւն, Հոկտեմբերյան հեղափոխութիւն և այլն), վորոնք Յերեանում նույնիսկ 5—6 որ տեւեցին: Սակայն, այդ աշխուժացման հետ միասին, նկատվեցին նաև վորոշ թեքումներ և բացեր: Բերենք մի քանիսը.

Յերեանի լազերում յեղել են «խիստ ավելորդ ձևականութիւններ», որինակ. Հիկիկ բարտողարին չեյին թողել առանց թույլտվութիւն մտնել լազերը: Լենինականի լազերում յեղել ե «խիստ դիսցիպլինա», որինակ, կարգը խախտողներին պատիժ (նարկադ) են տվել: Այս և նման մի քանի բացերի ու թեքումների վրա այս տարի, լազերների ժամանակ, անպայման պետք ե առանձին ուշադրութիւն դարձվի, վորպեսզի իրոք «պիոներական լազերները դառնան պատանեկական մասսայի հանգստի և լենինյան դաստիարակութիւն կենտրոններից մեկը» (ԸճԿ. Լ. Հովսեփյանի դիտողութիւններ):

Լազերային կյանքում կազմակերպված այս կամ այն ուղղականացման աշխատանքը պետք ե սերտորեն շաղկապված լինի կոլեկտիվների ներքին դաստիարակչական ու հասարակական քաղաքական աշխատանքների հետ, այլապես հնարավոր չի լինի իրագործել այն խնդիրները, վորոնք կուսակցութիւնն ու կոմսոմոլի կողմից

առաջադրված են պիոներական կազմակերպութիւն:

Բացի պատերազմի վտանգի և ԽՍՀՄ-ի պաշտպանութիւնն վերաբերյալ զրուցներէրից, վոր պետք ե կազմակերպել ողակում, կոլեկտիվում, գիշերը խարույկի շուրջը, բացի այն աշխատանքներից, վոր պիոներները պետք ե տանեն ընտանիքում, անտեսութիւնն մեջ՝ անտեսութիւնն ավելի լավ ձևերով կազմակերպելու համար, բացի այս բոլորից, մասնավորապես լազերային կյանքում պետք ե անցկացնել նաև մի շարք գործնական գիտելիքներ, վորոնք յուրաքանչյուր պիոներ, այս կամ այն չափով, պետք ե իմանա ու սովորի: Դրանք են՝

ՆՇԱՆԱՌՈՍՈՒԹՅՈՒՆ



Դեռ հնում մարդիկ մեծ տարածութիւն վրա հատուկ նշաններով եյին հայտնում իրենց մտքերը, ոգտագործելով կրակը և ծուխը:

Սրա շնորհիվ մարդիկ կարողանում եյին զգուշացնել միմիանց թշնամիներէ հարձակումից:

Այժմ նշանախոսությունը մեծ տեղ ունի մեզ մոտ, և վոչ միայն ռազմական նպատակներէ համար, այլ և առօրյա կյանքում: Ներկայումս նշանախոսությունը կատարեւապէս ընկած է հնի հետ համեմատած: Պիտներական կյանքում նշանախոսությունը նույնպէս կարող է հարկավոր լինել, մանավանդ երսկուրսիաների և լագերի ժամանակ:

Լագերում հաճախ պետք է լինում խոսել հեռու գտնվող կողմերի վրա կամ ողակի հետ, որինակ, խաղերի, արշավանքների ժամանակ: Գուռս՝ ձայնդ չի հասնի, վազել՝ նշանակում է ժամանակ կորցնել. ահա այստեղ պիտներների համար անփոխարինելի յէ դրոշակախոսությունը՝ Մորզեյի այբուբենով:

Այդ դրոշակախոսությունը կոչված է ամերիկացի Մորզեյի ազգանունով, վորը հնարել է նշանախոսության այբուբենը: Կազմված է գրծերից և կետերից, ահա այսպէս.

ՄՈՐԶԵՅԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Ե .	S —
Ի . .	Մ — —
Ս . . .	Ո — — —
Ղ, Խ	Շ — — — —

Ա . —	Ն — .
Ու . . —	Գ, Բ — — .
Ժ . . . —	Զ, Զ — — — .

Վ . — —	Դ, Թ — . .
Հ, Ե . — — —	Բ, Փ — . . .


Լ . . — —	Չ — — . .
-----------	-----------

Ր, Ռ . — .	Կ — . —
Լ . — . .	Ը — . — —
Պ . — — .	Ծ — . . —
Ֆ . . — .	Ճ — — . —
	Չ, Յ — . — .

Թվերով խոսելուց առաջ հարկավոր է զգուշացնել, դրա համար տալիս եք թ տառը (— . .) և ապա խոսում այս նշաններով՝

1 . —	6 —
2 . . —	7 — . . .
3 . . . —	8 — . .
4 —	9 — .
5	0 —
Տառասխալ Բառասխալ — — — — —	

Մորզեյի այբուբենով խոսելու համար անհրաժեշտ է ունենալ մի զույգ գունավոր դրոշակներ, լավ է կարմիր կամ սպիտակ:



Դրոշակները պետք է լինեն փոքր, այնպես վոր հնարավոր լինի ազատ կերպով կատարել շարժումները:

Յեթե ցանկանում եք խոսել մեկի հետ, պետք է նախ դրոշակները բարձրացնեք ձեր գլխից վերեւ և պտուտածն շարժումով դրավեք դիմացինի ուշադրությունը: Յեթե ձեզ նկատեցին և դրոշակի նույնաման շարժումով պատասխանեցին, դուք իջեցնում եք դրոշակները ցած և նորից բարձրացնում վերև, բայց առանց պտուտածն շարժումների. դա նշանակում է, թե՛ «պատ-

րասովիր, յես հիմա կխոսեմ»: Դրոշակները պահում եք, մինչև վոր մյուս կողմից նույնը կանեն. դա կնշանակի, թե՛ «մենք պատրաստ ենք ընդունելու»:

ԿԵՏԸ (.) հաղորդում են միայն աջ ձեռքի դրոշով, բարձրացնելով կողքից վերեւ, ուսերին հավասար:

ԳԻԾԸ (—) հաղորդում են յերկու դրոշակներով միասին, բարձրացնելով կողքից, նույնպես ուսին հավասար:

Որինակ, Կ տառը (— . —) տալու համար, պետք է բարձրացնել նախ յերկու դրոշակները և իջեցնել, հետո բարձրացնել աջ դրոշը և իջեցնել, ու ապա ելի բարձրացնել յերկու դրոշները և իջեցնել: Հենց վոր մի տառը վերջացրիք, վորպեսզի ընդունող կողմը չշփոթվի, աջ դրոշը բարձրացնում եք աջից ձախ՝ մինչև ծունկը և ելի տանում յետ՝ նախկին դրությանը: Այս նշանն անում եք ամեն տառից հետո:


Իսկ բառի վերջը ցույց տալու համար, յերկու դրոշակներով խաչաձևում եք ձեր ծնկների մոտ և առանց կանգնեցնելու յետ տանում: Նախադասությունը վերջացնելուց հետո, նույն շարժումը կրկնում եք մի քանի անգամ:

Յերբ վերջացնում եք ամբողջ խոսակցությունը, նույն շարժումը կրկնում եք մի քանի անգամ գլխի վերևում:

Շատ անգամ, Մորզեյի այբուբենով խոսելիս, տառերը, կամ նույնիսկ ամբողջ բառը, կարող է պատահել, վոր սխալ հաղորդեք: Ձեր սխալն ուղղելու համար բարձրացնում եք կամ միայն աջ դրոշը գլխից վերև և պտուտածն շարժում, վորը նշանակում է՝ «յես վերջին տառը սխալ ավեցի, նորից կտամ», կամ յերկու դրոշները, վոր նշանակում է՝ «վերջին բառը չհաշվել, նորից կտամ»:

Թեև Մորզեյի այբուբենով հաղորդածը կարելի չէ ընդունել մենտի, բայց ավելի հեշտ է յերկուսով կամ յերեքով, վորոնցից միայն մեկը հետեւում է խոսող կողմի դրոշների շարժումներին և նրանց ժամին հայտնում իր ընկերով, իսկ վերջինս այդ նշանները գրում է թղթի վրա: Այսպես որինակ. «կետ, գիծ, գիծ» տառը գրում է այսպես. «. — — ,»: Ստորակետն այստեղ նշանակում, վոր տառը վերջացավ: Բառի վերջում պիտի դնել (|):

Յեթե ընդունելիս մի վորեւ տառ կամ բառ չհասկացաք, անմիջապես նշան եք տալիս, տառի համար շարժելով մեկ դրոշը, իսկ բառի համար՝ յերկուսը: Սա նշանակում է առաջին դեպքում՝ «կրկնիր տառը», յերկրորդ դեպքում՝ «կրկնիր բառը»:




Մորզեյի այբուբենով կարելի չէ խոսել նաև առանց դրոշի, ձեռքերով, սուլիչով, խարույկով, ծխով և նույնիսկ՝ աչքերով ու լսատերով:

ՆՇԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՁԵՎԵՐՈՎ

Կա նաև նշանախոսության մի այլ ձև, վորը մեծ մասամբ ոգտագործում են նավաստիները՝ նավագնացության ժամանակ: Մեզ մոտ կարելի չէ այդ ձևով նույնպես խոսել, սա ավելի հեշտ ձև է, բանի վոր տառերն ու բառերը հաղորդում են վոչ թե գծերով ու կետերով, այլ՝ պայմանական նշաններով, շարժումներով: Այս ձևով կարելի չէ ավելի արագ և հեշտությամբ խոսել:

Տառը հաղորդելուց հետո այստեղ կարիք չկա առանձին շարժումներ անել, իսկ խոսակցությունը վերջացնելուց հետո՝ «հասկացա» կամ «չհասկացա» և այլն մտքերը հաղորդում են նույն ձևով, ինչպես վոր արվում է Մորզեյի այբուբենով: Այստեղ առանձին ուշադրություն պետք է դարձնել հաղորդելու տեխնիկայի վրա: Վտաքերը պետք է բաց պահել և շարժումները



կարգին ու ճիշտ կատարել, վորպեսզի հնարավոր լինի պարզ հասկանալ միմիանց: Կողկետովներն ու ողակները, ըստ իրենց ցանկության, այստեղ ցույց տրված նշանախոսության ձևերից կարող են ընտրել այն, վորը հեշտ է իրենց համար: Պիտներների համար հետաքրքիր է այդ և նրանք շուտ կըմբռնեն: Իհարկե, այս ալբոմները սովորեցնելիս պետք է հաշվի առնել կողկետի պայմաններն ու հնարավորությունները:

ՆՇԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՍՈՒԼԻԶՈՎ

Սուլիզով, բացի Մորգեյի ալբոմները հաղորդելուց, կարելի չէ տալ նաև մի քանի պայմանական նշաններ, վորոնք լազերային կյանքում պետք կգան ողակավարին և կովարին: Սրանք յերկուսն ել յերեկ սուլիզներ ունեն, սակայն շատ քիչ են ոգտագործում այդ նպատակներով: Կարելի չէ նույնիսկ շարքային վարժությունների մի ժամը սուլիզով տալ:

Յերևանի լազերում, որինակ, գիշերային պահակներն ունեյին իրենց հատուկ նշանները և գիշերները միշտ խոսում եյին իրար հետ: Դրանք հետևյալներն եյին, վորոնք կարելի չէ ոգտագործել մյուս լազերներում նույնպես: Սուլիզով խոսելիս կետը փշում եք մեկ անգամ՝ կտրուկ, իսկ գիծը փշում եք ավելի յերկար:

Ահա Յերեանի գիշերային պահակների նշանախոսութիւնն.

1. Ուշադրութիւնն . —
2. Կողմերն երկամ ողակավարներ, ինձ մոտ յեկեք .. —
3. Զգուշացում պահակներին, յերբ մի վորյեվե վտանգ կա ... —
4. Պահակապետներ, հավաքվել մի վորյեվե տեղ — .. —
5. Ընդհանուր հավաքույթ (անվերջ կետեր):

ՓՈՍՏԱՏԱՐ ԱՂԱՎՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաշխարհային պատերազմը ցույց տվեց, վոր փոստատար աղաձևները, կապի տեսակետից, կարող են հսկայական ոգնութիւն ցույց տալ բանակին: Պատմում են, վոր չնայած թընդանութային կրակին, ծխին, փոշուն, մթությանը, աղաձևները կարողացել են շատ արագ տեղեկութիւններ հասցնել զինքներում կռիւղ զորամասերին: Դեռ հեռագիրը, հեռախոսն ու ռադիոն այնքան չեն տարածվել, վորպեսզի նրանց միջոցով ամեն մի գյուղ կապվի մի ուրիշ գյուղի կամ քաղաքի հետ:

Ի՞նչ առանձնահատկութիւններ ունի փոստատար աղաձևը

Փոստատար աղաձևին պետք է ունենա յերկար վիզ, լայն կուրծք, յերկար փետուրներ

և ուժեղ մկաններով թևեր: Մի խոսքով, նա պետք է ոժտված լինի արագ և յերկար տարածութիւն թռչելու ընդունակութեամբ, լավ տեսողութեամբ ու հիշողութեամբ և, վորը գլխավորն է, կապված լինի իր բնի հետ:

Այդ հատկութիւնները հնարավորութիւն են տալիս փոստատար աղաձևուն տասնյակ հազարավոր վերստեր կտրել:

Ինչքան կարող է թռչել փոստատար աղաձևը

Փոստատար աղաձևին կարող է, միջին հաշվով, մեկ ժամում թռչել 60—70 կիլոմետր, 100—130 մետր բարձրութեան վրա: Իսկ լավ յեղանակներին՝ ավելի հեռու և բարձր կարող է թռչել:

Յածր թռչող աղաձևներին շատերը ճանապարհին վոչնչանում են փոթորիկներին, գիշերային թռչուններին:

Յեթե փոստատար աղաձևու վրա փոքր ժամանակվանից խնամք տարվի, նա կարող է 8—10 տարի ծառայել մեզ, տալով տարեկան 6—8 զույգ ձագ:

Ինչպե՞ս խնամել յեվ սովորեցնել փոստատար աղաձևներին

Փոստատար աղաձևներին պետք է լավ խնամել:

Բույնը հարկավոր է պատրաստել այնպիսի

բարձր տեղում, ուր շարժում ու ադմուկ քիչ
կա և մութ ու խոնավ է։ Այլապես աղավնի-
ները կարող են շուտով հիվանդանալ և սատկել։

Աղավնիների կերը դժվար է ձեռք բերել։
Նրանք կերակրվում են վորդերով, սերմերով և
այլն։ Սակայն պետք է նրանց վորոշ չափով
գարի, ցորեն կամ մաքրած ցորենի մնացորդ
տալ։ Իսկ խմելու ջուրը պետք է շուտ-շուտ փո-
խել, հարկավոր է հետևել, վորպեսզի ջուրը մա-
քուր լինի։ Աղավնիներին ամենից առաջ պետք
է ընտելացնել տեղի հետ։ Յերը նրանք ձագեր
են հանում, շատ են կապված լինում իրենց
բնի հետ։ Դրանից ոգտվելով, հարկավոր է գնել
աղափուն վանդակի կամ կողովի մեջ, տանել
մի քանի վերստ հեռու և բաց թողնել։ Այդ
ժամանակ նա իր բունը կվերադառնա։ Յերը ա-
ռաջին փորձը հաջող անցավ, կարելի է նրան
ավելի հեռուն տանել (մոտ 10 վերստ) և դարձ-
յալ բաց թողնել։ Այդպիսով նա կամաց-կամաց
կվարժվի ամենահեռու տեղեր թռչել և վերա-
դառնալ իր բունը։

Աղափուն բաց թողնելիս հարկավոր է տալ
միայն ջուր։ Շատերը, վորպեսզի կարողանան
նամակ ուղարկել և ստանալ, այնպես են անում,
վոր նամակագրական կապով կապվող վայրերից
մեկում աղավնին ձագ հանի, մյուսում կերա-
կրվի։ Այդպիսով կապը լինում է ավելի ուժեղ։
Աղափուն միջոցով ուղարկվելիք նամակները

պետք է գրել նեղ, յերկար թղթի վրա։ Գրելուց
հետո վորորում են և մտցնում սագի հաստ փե-
տուրի արանքում և ծայրերը փակում են։ Փե-
տուրը թելով կապում են աղավնու վոտից։

Պիոներական կոլեկտիվներին մեծ ոգուտ
կարող են տալ փոստատար աղափնիները։ Կոլեկ-
տիվը, մի քանի գույգ փոստատար աղափնի պա-
հելով, հնարավորութուն կունենա ուժեղացնելու
իր նամակագրական կապը զավառային կամ
շրջանային բյուրոների, հարևան գյուղերի ու
քաղաքների պիոներական կոլեկտիվների հետ։





Բացի այդ, պիոներները կծանոթանան
փոստատար աղափնիների սովորությունների ու
կյանքի հետ։

Լավ կլինեք, վոր պիոներական կոլեկտիվ-
ները մտածեյին այս մասին։

ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Հետախուզական նշանները մի ամբողջ լեզու
յեն կազմում, անհասկանալի ուրիշների համար։
Այդ նշաններն ամենից շատ պետք են գալիս
հակառակորդից պաշտպանվելիս կամ նրան հե-
տապնդելիս, յերը հարկավոր է լինում գգուշաց-
նել ընկերներին կամ նրանց տեղյակ պահել
տեղի զանազան պայմաններին, որինակ, լավ և
վատ ջրին, ճանապարհների ուղղությանը և այլն։
Քաղաքում յեվս կարելի է գործադրել այդ նը-
շանները, սակայն խնայելով պատերը։


Պիոներները հետախուզական նշանները
սրանք են՝

- 1  Մենք գնացինք այս ուղղութիւնով
- 2  Այս ուղղութիւնով չգնալ
- 3 
 4  } Մենք ծովեցինք այս կողմը
- 5  Մենք վերադարձանք
- 6  Այս ջուրը կարելի չէ խմել
- 7  Այս ջուրը չի կարելի խմել
- 8  Անտառը ծախ կողմն է
- 9  Գյուղը ծախ կողմն է
- 10  Լազերը ծախ կողմն է
- 11  Լազերը չի կարելի գնալ
- 12  Այնտեղ վտանգ կա
- 13  Յեռ վտանգի մեջ եմ
- 14  X բայլի վրա նամակ կա

Բացի այս նշաններից, կան նաև զինվորական պայմանական նշաններ, վորոնցից մի քանիսն անհրաժեշտ է պիտաներին իմանալ. այսպես որինակ.

-  ՅԵԿԵՂԵՍԻ
-  ԶՐԱՂԱԿ
-  ԳՈՐԾԱՐԱՆ
-  ԱՌԱՆՁԻՆ ԾԱՌԵՐ
-  ԶՐԶՈՐ ԶԱԾԿՈՎ
-  ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԿԱՅԱՆ
-  ԲԱՐԵ ՊԱՏ
-  ԿԱՅՏԵ ԿԱՆԿԱՊԱՏ
-  ԲԼՐԱԿՆԵՐ
-  ՓՈՍԵՐ
-  ՎԵՐՍՏԱԿՈՒՅԿ (ՍՅՈՒՆ)
-  ՅԵՐԿԱԹԳԻԾ
-  ԽՃՈՒՂԻ

Իհարկե սրանք դեռ բոլորը չեն, յեթե բոլոր պայմանական նշաններն այստեղ աալու լինենք, ձեզ համար դժվար կլինի սովորել, մեկ ել միտք չունի այդ բոլորը փոքր հասակում վերջացնել: Յերը մեծանաք և մտնեք Կարմիր բանակի շարքերը, այստեղ ապելին կսովորեք և կլրացնեք պակասը:



Այս նշանները, ինչպես նաև պիոներների հետախուզական նշանները, հարկավոր ելալ գծագրելի իմանալ:

Նքսկուրսիաների, լագերների նախորդակին, ձեր ընդհանուր հավաքույթների հետ միասին, հարկավոր ել փորձնական վորոշ պարապմունքներ ունենալ՝ այդ նշաններին վարժվելու համար: Ճանապարհորդության կամ արշավի ժամանակ յեթե մատիտ, թուղթ ու այլ հարմարություններ չկան, կարելի յե կավիճով, քարերով, փայտով կամ այլ նշաններով գետնի վրա գծել և ցույց տալ ձեր ուղղությունը:


ԻՆՉՊԵՍ ՎՈՐՈՇԵԼ ՅԵՐԿՐԻ ԿՈՂՄԵՐԸ

Ճանապարհորդության ժամանակ կուլեկ-

տիվին կամ ողակին կարևոր ել իմանալ յերկրի կողմերը և վորոշել, թե դեպի ուր են գնում իրենք: Այդ բանը կարելի յե անել հատուկ գործիքի ոգնությամբ, վորը կոչվում ել կողմնացույց: Կողմնացույցները լինում են զանազան տեսակների: Ամենից շատ գործածական կողմնացույցը մի կլոր պղնձե տուփ ել, վորի մեջ ասեղի վրա գետեղված ել մագնիսական սլաք:

Տուփի մեջ, հատակի վրա քաշված են յերկու փոխադարձ ուղղահայաց տրամագծեր—C IO (հյուսիս-հարավ) և B Յ (արևելք-արևմուտք)—աշխարհի կողմերը նշանակելու համար: Յերբեմն հատակի վրա փորված են լինում նաև աստիճաններ: Տուփը ծածկված ել ապակիով:


Ճանապարհորդության, լագերի ու եքսկուրսիաների ժամանակ յերկրի կողմերը վորոշելու համար, հարկավոր ել կողմնացույցն ուղիղ պահել, մի փոքր շարժել և իսկույն կարելի յե իմանալ, թե վոր կողմն ել գտնվում հարավը, հյուսիսը, արևելքը կամ արևմուտքը:



Ասեղի վրա գետեղված սլաքը բաժանված է յերկու գույներով՝ սպիտակ և սևով։ Սեպ գույնը միշտ ձեր շարժումների ժամանակ ուղղվում է դեպի հյուսիս, և ինքներդ ել կողմնացույցի հետ շուռ գալով՝ կարող եք անմիջապես գտնել այդ կողմը, վորից հետո արդեն մնացած կողմերը վորոշել հեշտ ե։

Յերկրի կողմերը կարելի չէ վորոշել նաև առանց գործիքի, հետևյալ միջոցներով։

Ժամացույցի միջոցով.— Վերցնում եք ժամացույցը և պահում այնպես, վոր ժամը ցույց տվող սլաքը նայի ուղղակի արևին։ Յերբ ժամացույցը կլինի այդ վիճակում, Հավասար կիսեցեք



ժամը ցույց տվող սլաքի և 12-ի միջև յեղած անկյունը, և այդ անկյունը կիսող գի-

ծը ցույց կտա հարավը։

Ծառերի միջոցով.— Հյուսիսային կողմի ճյուղերը միշտ ավելի բիշ են լինում։

Յեկեղեցու միջոցով.— Տաճարները միշտ լինում են դեպի արևելք, իսկ յեկեղեցու զվառավոր մուտքը լինում է արևմուտքից։


Մամուռների միջոցով.— Մամուռը բռնում է հյուսիսային կողմում (առանձին կանգնած ծառերի)։

Ձյունի միջոցով.— Ձյունը հեշտությամբ և առաջին հերթին հալչում է հարավից։

Կոճղի միջոցով.— Կոճղի (կտրված ծառի ներքևի մասը) տարիքային ողակները միջև յեղած տարածությունը հյուսիսային կողմում ավելի բիշ է լինում։

ԻՆՉՊԵՍ ԻՄԱՆԱԼ ԳԵՏԻ ԼԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՆՅ ՆՐԱ ՎՐԱՅԻՅ ԱՆՅՆԵԼՈՒ

Կանգնելով ափին, վորքան հնարավոր է գետին մոտ, նշանակեցեք հակառակ ափին, հենց ձեր դիմացը, մի քար, ծառ, թուփ և այլն։ Նշանակեցեք այն տեղը, վորտեղ դուք կանգնած եք և աջ կամ ձախ կողմից գույգ թվերով (20, 30, 40, 50, 60) քայլեր հաշվեցեք ու առաջ գնացեք։ Հաշվելով քայլերը, նշանակեցեք այդ տեղը նույնպես, և նույն ուղղությամբ հաշվեցեք նաև ձեր քայլերի կեսը։ Յեթադրենք առաջին անգամ հաշվել էյիք 20, յերկրորդ անգամ կնշանակի պետք է հաշվել 10 քայլ (յեթե հաշվել էյիք 30 քայլ, յերկրորդ անգամ 15 և այլն)։ Հետո, նշանակելով այդ տեղը նույնպես, դառնում եք մեջքներդ դեպի գետը և այդ ուղղությամբ գնում այնքան, մինչև վոր հակառակ



ափին ձեր նշանա-
կած կետը կհամա-
տեղվի այն տեղի
հետ, վորը դուք
ստացել եյիք առա-
ջին անգամ 30, 40
քայլ հաշվելիս և
այն տեղի հետ՝ վոր-

տեղ դուք կանգնած եք:

Յերբվոր դուք կհասնեք այն տեղ, վորտեղ
այդ բոլոր կետերը կհամատեղվեն, նշանակում
եք այդ տեղը և հաշվում, թե ափից այդ ուղ-
ղությամբ քանի՞ քայլ եք յեկել, իմանալով այդ
տարածությունը՝ բազմապատկում եք յերկու-
սով և ստանում գետի լայնությունը: Տվյալ դեպ-
քում $30 \cdot 2 = 60$ քայլի:

ԻՆՉՊԵՍ ՉԱՓԵԼ ԳԵՏԻ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ


Գետի արագությունը չափելու համար նշա-
նակեցեք գետի ափին մի վորյեվե կետ, քարով,
փայտով, կանաչով և այլն: Վերցրեք ժամա-
ցույցը ձեր ձեռքը և այդ նշանակած տեղից
զցեցեք գետը մի վորյեվե թեթեվ իր, վորը
կանգնի ջրի մակերեսին (ծառի ճյուղեր, խցան
և այլն) և նրա հետ միասին գետի հոսանքի
ուղղությամբ վազեցեք մի բոպե, բոպեն լրա-
նալուց հետո անմիջապես նշանակեցեք ափի

մոտ այն տեղը, վորտեղ գտնվում եր ջրի մեջ
լողացող իրը:

Չափելով այն տարածությունը, վորն ընկ-
նում ե յերկու նշանակված տեղերի մեջ, դուք
կստանաք այն տարածությունը, վոր անցնում
ե գետը մի բոպեյում:

ԻՆՉՊԵՍ ՉԱՓԵԼ ԱՅՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՈՐՈՆՑ ՉԻ ԿԱՐԵԼԻ ՀԱՍՆԵԼ


Յենթադրենք ուզում եք չափել մի վորեն
ծառի (որինակ XA) բարձրությունը. հարկավոր
ե ծառից մի քանի քայլ հեռավորության վրա
(յենթադրենք 12) խփել մի ձող կամ գավազան,
յենթադրենք 3 քայլ բարձրությամբ: Հետո
պետք ե շարունակել չափել քայլերը նույն
ուղղությամբ այնքան, մինչև վոր ձողի և ծա-
ռի ծայրերը ձեր աչքի համար կազմեն մի
գիծ X.D.C. ստացվում են յերկու նման յեռան-



կյունիներ XAC և XBC, ծառի բարձրությունն

այստեղ կլինի այնքան ավելի գավազանի բարձրությունից, վորքան մեծ տարածությունը շատ է BC տարածությունից: Յեթե AC տարածությունը հավասար է 16 քայլի, իսկ AC հավասար է 4-ի, այն ժամանակ ծառի բարձրությունը հավասար կլինի $AX = \frac{16 \cdot 3}{4} = 12$ քայլի:

Բարձրությունը կարելի չէ չափել նաև ուրիշ ձևով՝ հայելու միջոցով: Չափվող առարկայից վորոշ տարածության վրա դրվում է հայելի, այնպես վոր չափվող առարկայի ծայրն անդրադառնա հայելու մեջ. հայելու ուղղությունը




յերկու յերեք քայլ բարձրություն ունեցող գավազանով գնում եք այնքան, մինչև վոր ձողի ծայրն յիս անդրադառնա հայելու մեջ: Ստացվում են յերկու նման յեռանկյունիներ, վորոնց հարաբերությունը կտա առարկայի բարձրությունը. $AB:BC = CD:ED$ կամ $AB = \frac{BE \cdot CD}{ED}$:

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՀԱՍԱՐԱԿ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ

Շատ ժամանակ հարկավոր է լինում անց-


նել առժակից կամ փոքր գետից, սակայն հնաբավոր չի լինում, վորովհետև գետը լայն է, թռչել չի լինի և բացի այդ՝ խոր է: Այդպիսի դեպքերում, մանավանդ յերբ այդ ճանապարհը մշտական յերթևեկության համար է, կոլլեկտիվը կամ ողակը պետք է աշխատեն մի փոքրիկ



կամուրջ կառուցել: Վերևի նկարը ցույց է տալիս, թե ինչպես կարելի չէ հասարակ ձևով փորել կամուրջ կապել: Այդ ձևի կամուրջը կարելի կլինի նաև բարձրացնել, յեթե դուք ցանկանում եք:

Կա նաև կամուրջի մի այլ ձև, այսպես ասած կախովի կամուրջ, վորը նույնպես կարելի չէ կոլլեկտիվի ուժերով պատրաստել: Դրա համար բավական է ճարել մի քանի հատ հին տակառներ և նրանց տախտակները կապել միմի-

անց ու այս ձևով կապել գետի յերկու ափերին խփած հաստ գերաններին կամ ցցերին:



Հենց այս ձևի կառուցված կապելու ժամանակ ձեզ ամենից շատ կարող են պետք գալնախորդ պլուստ ցուլց արված հանգույցները:

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՎՈՐՈՇԵԼ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր պիտներ պիտի կարողանա մոտավորապես, աչքի չափով, վորոշել առարկաների միջև յեղած տարածությունները, նրանց չափերը: Սակայն դա միանգամից չի հաջողվի: Հարկավոր է յերկար վարժվել տարածությունները վորոշելու մեջ, ավելի կամ պակաս ճիշտ միջոցով ստուգել սխալները, վորպեսզի հնարավոր լինի հաջող հետևանքների հասնել:

Պիտները պիտի սովորի մի անգամից, աչքի

չափով վորոշել, որ տարածությունը մինչև անտառը, վորը տեսանելի յե յերկու վերստի վրա, գետի լայնությունը, փոսի խորությունը, տան կամ ժայռի բարձրությունը, յերկաթուղադծի տեսանելի կտորի յերկարությունը և այլն:

Տարածությունը վորոշելիս նկատի պիտի առնել հետևյալը.

50 ֆալի վրա կարելի յե նշմարել աչքերը:

100 ֆալի վրա աչքերը վորպես կետեր են յերևում:

200 ֆալի վրա յերևում են կոճակները և կարելի յե վորոշել հագուստի զանազան մանրամասնությունները:

300 ֆալի վրա տեսնվում է մարդու դեմքը:

500 ֆալի վրա վորոշվում են հագուստի գունավոր մասերը:

700 ֆալի վրա տեսանելի յեն վոտների շարժումները:


2 վերսի վրա տեսանելի յեն առանձին ծառերը:

3 վերսի վրա տեսանելի յեն տների ծխնուլույզները:

6 վերսի վրա տեսանելի յեն առանձին շինությունները:

10—15 վերսի վրա տեսանելի յեն մեծ յեկեղեցիների զմբեթները և բարձր շենքերը:

ԳԼՈՒԽ IV
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ
ՍՈԱԶԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ



Յուրաքանչյուր պիտներ պիտի իմանա, թե ինչպես պետք է ոգնություն ցույց տալ ուրիշին՝ պատահարի ժամանակ:

Կյանքի մեջ մարդու հետ ամեն տեսակ փորձանքներ պատահում են, և շատ անգամ փորձանքը մի այնպիսի տեղում է պատահում, վորտեղ վոչ բժիշկ կա և վոչ էլ բուժակ:

Վոչ վոք չգիտե, թե ինչ է սպասում իրեն աշխատանքի կամ զբոսանքի միջոցին, լազերում, ճանապարհորդելիս կամ՝ մինչև իսկ՝ տանը նրստած ժամանակ:

Ամեն մի աշխատանք, իր բնույթի համե-

մատ, կարող է վորևե փասվածք հասցնել աշխատողին:

Փորձանքը կարող է պատահել և վոչ աշխատանքի ժամանակ, որինակ՝ ձիուց վայր ընկնելը, փողոցում վայր ընկնելը, կառքի և ավտոմոբիլի տակ ընկնելը, լազերային կյանքում մանավանդ արևահար լինելը կամ գետում լողալիս մի վորևե փորձանք պատահելը և այլն: Այս բոլոր դեպքերումն էլ պիտները պետք է իմանա ոգնել տուժածին: Իսկ ոգնություն հասցնելու համար պետք է գիտենալ՝ թե ինչպես կարելի չէ ոգնել, վորպեսզի ոգնելու փոխարեն վնաս չհասցնեք:

Յուրաքանչյուր գործը պահանջում է գիտություն, նույնպես և առաջին ոգնությունը պահանջում է գիտություն:

Չպետք է մոռանալ, վոր աննպատակահարմար ոգնությունը կարող է փաս հասցնել. որինակ, շատ տեղերում վերքի վրա հող են ցանում, իսկ դա շատ վատ ու փասակար մի սովորություն է. հողի մեջ կան ամեն տեսակ մանրենք, վորոնք կարող են վարակել վերքը և արյան վարակում առաջ բերել, վորը միշտ էլ մահով է վերջանում: Ահա թե վորքան մեծ նշանակություն ունի գիտենալ՝ թե ինչպես պիտի ոգնություն հասցնել մեկին փորձանքի ժամանակ: Այս բանն էլ հաջող կազմակերպելու համար հարկավոր է մի քանի կանոններ սովորել:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ՀԻՎԱՆԴԻ ՅԵՎ ՎԻՐԱՎՈՐԻ ՀԵՏ

Ոգնության ժամանակ նախ և առաջ պետք է հոգ տանել, վոր տուժածն տվելորդ տանջանքներ չունենա: Յեթե վիրավոր ե, պետք ե շատ զգուշ կերպով պառկեցնել նրան մի հանգիստ և հարմար տեղ: Պետք ե աշխատել, վոր ողջ լինի մաքուր և թարմ, պիտի հանել նրա վրայից ճշնշող հագուստը, արձակել ոճիքը և գոտին: Յեթե վիրավորն արյուն շատ ե կորցրել, պետք ե տալ խմելու համար մաքուր և սառը ջուր. վիրավորի հագուստի հետ պետք ե վարվել շատ զգուշությամբ. կեղտոտ սպիտակեղենը պետք ե հանել ափսոս, վոր վերքին չկպչի ու վարակի:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ՎԵՐՔԻ ՀԵՏ

Վերքը չվարակելու համար՝ յերբեք նրան ձեռք չպետք ե տալ: Ձեռքերը պետք ե լվանալ տաք ջրով և սապոնով, բայց վորովհետև նրանց վրա ելի կարող են մանրէներ ֆալ, ուստի հարկավոր ե ձեռքերը լվանալ հականեխիչ լուծույթով, ինչպես որինակ՝ սուլեյմայով կամ կարբոլյան թթվաուտով:

Վերքը չպետք ե լվանալ սովորական ջրով, լինի դա հորից կամ ջրմուղից՝ վերցրած: Յեթե վերքի յեզրերը շատ կեղտոտ են, ծայրահեղ դեպքում կարելի յե լվանալ այդ յեզրերը յեռա-


ցած սառն ու մաքուր ջրով, և այդ ջրամանը պետք ե շատ մաքուր լինի: Բոլորից լավ ե վերքի յերեսին քսել յոդ:

Պետք ե աշխատել վորքան կարելի յե շուտ ծածկել վերքը, վոր մանրէներ չընկնեն նրա մեջ: Վերքը փաթաթելու համար պետք ե գործածել մաքուր և սպիտակ շորի կտոր, որինակ՝ սրբիչ, թաշկինակ, զգկապ, մաքուր սպիտակեղեն ևայլն, միայն թե կտորը նոր չլինի, այլ լվացված: Ամենից լավ ե վերքը ծածկել հականեխական լուծույթով պատրաստված մի կտոր թանգիֆով, վորը կարելի յե պատրաստի վերցնել դեղատնից: Թանգիֆի վրայից պետք ե դնել խոնավացած բամբակ, վորը ծծում ե վերքի արտաթորությունը: Վերքի վրա բամբակ չի կարելի դնել, վորովհետև նա իսկույն կպչում ե վերքին և հետո դժվար ե պոկ գալիս:

ԻՆՉՊԵՍ ԿԱՊԵԼ ՎԵՐՔԻ

Վերքը բամբակով և թաշկինակով ծածկելուց հետո պետք ե կապել, վորպեսզի թաշկինակն ու բամբակը վայր չընկնեն. կապելու համար գործ են ածում փաթաթան՝ պատրաստած թանգիֆից, քաթանից կամ ֆլանելից, կամ թե բանեցրած բայց միայն մաքուր լվացած կտորից: Պետք ե կտրել զանազան յերկարությամբ բայց միևնույն լայնությամբ կտորներ, ծայրերը կարել միմիանց, կլորել և դրանով փաթաթել վերքը: Ամեն պիտ-

ներ վերք կապել չի կարող, դրա համար հարկավոր է փորձառություն:



Այստեղ մի քանի նկարներ լինելուց ցույց տված ձևերը պարզում են, թե ինչպես պետք է կապել այս կամ այն վերքը:

Կան նաև մի քան հիմնական կանոններ, վոր յուրաքանչյուր պիտի նույնպես պետք է իմանա և վերջը կապելիս գործադրի. դրանք հետևյալներն են.

- 1) Կանգնել յերեսը դեպի հիվանդը:
- 2) Վիրակապը պահել աջ ձեռքում:
- 3) Ձախ ձեռքով


պահել մարմնի այն մասը, վորն ուզում եք կապել:

4) Բացել վիրակապը ձախից դեպի աջ:

5) Վտարը կամ ձեռքը կապելիս պետք է սկսել փաթաթել մասներից, ձեռքի ու վտարի բարակ տեղից:

6) Վերքը փաթաթելիս հարկավոր է յերբեմն վիրակապը դարձնել (շուռ տալ), վորպեսզի կապը պինդ մնա և չքանդվի:

7) Ամուր փաթաթել չի կարելի, պետք է այնպես փաթաթել ձեռքն ու վտար, վոր արյունը կանգ չառնի, վոր ձեռքն ու վտար չմեռնեն:



Յեթե ձեռքի տակ փաթաթան չկա, կարելի չէ շատ հասարակ և հարմար ձևով կապել յեռանկյունի շորի կտորով կամ վզկապով, վորը

կարելի չէ պատրաստել մաքուր լվացած սպիտակեղենից, ամրացնելով անգլիական բորոցով:

ԻՆՉՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆԸ


Յուրաքանչյուր վիրավորում սովորաբար առաջացնում է արյունահոսություն: Այդ արյունահոսությունը մեծ մասամբ շատ շուտ կանգ է առնում, յերբ վերքը կապում են և վիրավորված տեղը սեղմում թանգիֆով, բամբակով և փաթաթանով: Բայց լինում են դեպքեր, յերբ վերքից շատ արյուն է գնում, վորը կարող է վիրավորի մահվան պատճառը դառնալ: Այդ պատճառով պիտի ներկայացնեն շատ կարևոր է իմանալ թե

ինչպէս պետք է դադարեցնել արյունահոսութիւնը:

Արյունն իր հոսանքն սկսում է սրտից և տարածվում է մարմնի բոլոր մասերում՝ մի տեսակ խողովակների միջոցով, վորոնք կոչվում են զարկերակ: Յեթե սեղմենք բութ մատով մեկի ձեռքը հենց դաստակի մոտ, մենք մատի տակ կզգանք արյան զարկը. այս զարկը կոչվում է պուլս: Զարկերակների մեջ արյունը բաց կարմիր գույնի յե:

Հետո արյունը վերադառնում է դեպի սիրտն ուրիշ խողովակներով, վորոնք կոչվում են յերակ և վորոնք մարմնի շատ տեղերում մաշկի տակից յերևում են կապույտ լարերի պես: Սրանց մեջ արյունը մուգ գույնի յե և հոսում է դանդաղ:

Արյունահոսութիւնն առանձնապես վտանգավոր է՝ վիրավորված զարկերակից: Զարկերակից հոսող արյունը ար, բաց կարմիր գույնի յե, հոսում է հորդառատ և կարծես զարկերով է դուրս թափվում: Այդպիսի արյունահոսութիւնը դադարեցնելու համար պետք է ամուր սղմել զարկերակը վերքից մի փոքր վերև (այսինքն սրտին ավելի մոտ) և վոսկրի վրա:



Սղմելու փոխարեն կարելի յե ամուր կերպով կապել (վերքից վերև) վիրավորի ձեռքը կամ վոտը թաշկինակով, կտրած սրբիչով, վզկապով, փոկով և այլն, միայն նախորոք զարկերակի վրա պիտի դնել մարուր լաթից պատրաստած գունդ կամ կտրած փաթաթան: Բայց չպետք է մոռա-

նալ, վոր վոտքը կամ ձեռքն այդպես ամուր կապած կարելի յե պահել վոշ ավելի՝ քան յերկու յերեք ժամ: Յեթե յերկու յերեք ժամից անցել է և բժիշկ չկա, պետք է թուլացնել կապը, զարկերակը սեղմել մատով, վորպեսզի արյուն չհոսի, և քիչ հետո նորից կապել:

Յերբ արյունը հոսում է յերակից, պետք է բարձր պահել վոտքը կամ ձեռքը և սղմել կամ կապ դնել վերքից ցածր (սրտից հեռու), վորովհետև այստեղ արյունը հոսում է վոշ թե սրտի կողմից, ինչպես դա զարկերակների մեջ է, այլ հակառակ ուղղությամբ, դեպի սիրտը:


Հաճախ, կարծես առանց պատճառի, լինում է արյունահոսութիւն քթից: Այդ արյունահոսութիւնը դադարեցնելու համար պետք է հի-

վանդին հանգիստ նստեցնել և վոչ թե պառկեց-
նել: Պառկած դրության մեջ արյունն ավելի
ուժեղ և հոսում գեպի գլուխը, ուստի դժվար
կլինի դադարեցնել այն: Այդ դեպքում պետք է բաց
անել ոձիքը, վորպեսզի արյունը գլխից ազատու-
րեն յետ գնա յերակներով. ճակատի վրա, քթի
արմատի մոտ, յերկու աչքի մեջտեղը պետք է
դնել սառույց կամ սառը ջրով թրջած լաթ, վո-
րովհետև սառնությունից արյան անոթները սեղմ-
վում են. քթի մեջ պետք է խոթել խոնավացած
բամբակ՝ վորքան կարելի յետ ամուր, բայց այն-
պես, վոր բամբակի մի ծայրը դրսից յերևա և
հեշտ լինի հանելը:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ԿՈՏՐՎԱԾՔՆԵՐԻ ՀԵՏ

Յերկու տեսակի կոտրվածքներ կան — փակ,
յերբ մաշկի վրա վոչ մի վնասվածք չկա, և բաց,
յերբ վոտքն ու ձեռքը վիրավորված են նաև
դրսից ու վոսիքի կոտրված ծայրը դուրս է ցըց-
ված վերքից: Այդպիսի կոտրվածքների դեպքում
պետք է առանձին խնամքով, շատ զգուշ, հիվան-
դին փոխադրել հարմար տեղ, վորպեսզի ուժեղ
ցավ չզգա, և առաջին հերթին այնպես պետք է
անել, վոր կոտրված ձեռքը կամ վոտը մնա հան-
գիստ պարզած, չշարժվի և չճոճվի:

Այդ նպատակով, կոտրված ձեռքի կամ վոտքի
համար զործ են ածում մի տեսակ տախտակ, վորը



կոշվում է բեկա-
կալ: Յեթե այդ
տախտակներից
կամ բեկակալնե-
րից չկա, գործնա-
րազացնելու հա-
մար կարելի է ոգ-
տագործել միջակ
հաստությամբ


ծառի կեղև, ուղիղ ճիւղոտներ կամ ծառի ճյու-
ղեր, և ըստ հարմարության ոգտագործել:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ԱՅՐՎԱԾՔԻ ՀԵՏ

Այրվածքները զանազան տեսակ են լինում:
Թեթև այրվածքն առաջացնում է մաշկի վրա
միայն կարմրություն, յեթե այրվածքն ուժեղ
է, մաշկի վրա բշտիկներ են առաջ գալիս, իսկ
ամենախիստ այրվածքներից մաշկը և նրա տակ
գտնվող մասերն այրվում են բոլորովին և ա-
ծուխ դառնում:

Վտանգավոր են վոչ
միայն զորեղ այրվածք-
ները, այլև թույլերը,
յերբ նրանք մարմնի վրա
մեծ տեղ են բռնում:

Այրվածք պատահելու
դեպքում նախ և առաջ



պետք է հոգ տանել, վոր մանրենքը վնասված մաշկից ներս չմտնեն կազմվածքի մեջ. այդ նպատակով պետք է կապել այրված տեղը նույնպես մաքուր կերպով, ինչպես սովորական վերքը:

Այրվածին ոգնելիս, պետք է զգուշությամբ հանել նրա հագուստը. յեթե հագուստը գժվաբությամբ է հանվում և ցավ է պատճառում հիվանդին, պետք է կտրել մկրատով, միայն այնպես, վոր չվնասվի մաշկը յեվ չպատռվեն առաջացած բշտիկները: Յեթե այրվածքն այնքան թեթև է, վոր միայն կարմրել է մաշկը, կարելի է վրան ցանել մաքրած սոդայի փոշի: Յեթե բշտիկներ կան, պետք է այրված տեղին քսել վազելին կամ կրակաթի հետ կտավահատի ձեթ: Չպետք է պատռել բշտիկները, վորովհետեւ դրանով կնպաստեք մանրենքի ներս մտնելուն յեվ կվարակեք այրվածքից առաջացած վերքը:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԱՐԵՎԱՀԱՐԻՆ ՅԵՎ ԶԵՐՄԱՀԱՐԻՆ

Եքսկուրսիաների ժամանակ պիտներներէից մեկն ու մեկը յերբեմն հիվանդանում է և հաճախ չեն իմանում թե ինչից. շունչը կտրվում է, սրտի գործունեությունը խանգարվում, պիտները կորցնում են գիտակցությունը և ուշաթափված ընկնում: Այս կոչվում է արևահարություն:


Արևահարության և ջերմահարության դեպքում պետք է շուտ տեղափոխել հիվանդին լավ տեղ, հանել վրայից բեռը, հագուստը, սառ ջուր լեցնել գլխին և կրծքին: Խմելու համար շատ ջուր տալ: Յեթե հիվանդը չի շնչում, պետք է կատարել արհեստական շնչառություն:

Արևահարությունից կամ ջերմահարությունից կարող է պիտները հանկարծամահ լինել. պետք է վաղորոք միջոցներ ձեռք առնել այդ տեսակ պատահարներից պաշտպանվելու համար:

Այդ նպատակով պետք է, ըստ կարելվոյն, ամառվա տաք օրերին ծանր աշխատանք չըկատարել, գլուխը բաց չթողնել, հաճախ հանգստանալ և շատ ջուր խմել: Եքսկուրսիաների ժամանակ պետք է դուրս գալ առավոտը վաղ, իսկ նակ պետք է դուրս գալ առավոտը վաղ, իսկ ճանապարհին, ամենաշոք ժամանակ, կովարը պետք է նշանակի դատար մի վորեւ տեղում: Ծամբա գնալիս պետք է քիչ բեռ վերցնել, հագուստը պետք է թեթև լինի: Խիտ սյունով և սեղմ շարքերով չպետք է քայլել, այլ ազատ և միմիանցից հեռու, վոր քամին խփի յուրաքանչեւ յոյնիցից: Յերբ մեկն ու մեկը գլուխը ցավի, յեւ չյուրին: Յերբ մեկն ու մեկը կտրվի, թոշնի—պետք է իսկույննստեցրեալ կարմրի, թոշնի—պետք է իսկույննստեցնել, ջուր տալ խմելու և յեթե հնարավոր է ստվերում հանգիստ տալ նրան:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԵԼԵԲՏԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՅՑ ՎՆԱՍՎԱԾԻՆ

Ելեքտրական հոսանքից ևս կարող են առաջ գալ այրվածքներ: Ոգնություն ցույց տալու համար նախ և առաջ պետք է վազել վրձն թե տուժածի մոտ, այլ անջատիչի մոտ յեվ փակել ելեքտրական հոսանքը: Յեթե մի վորևե պատճառով անհնար է անջատել հոսանքը, այն ժամանակ յերբեք չի կարելի մերկ ձեռքերով դիպչել տուժածին՝ նրան լարից հեռացնելու համար, թե չե ոգնություն հասցնող պիտանքն ել նրա հետ գոյ կգնա ելեքտրոնոսին:



Պետք է
փորձե
լարը հե-
ռացնել
տուժա-
ծից շոր
փայտի
միջոցով:

Տուժածին կարելի չէ մոտենալ միայն ուետինե ձեռնոցներով և կրկնակոշիկներով կամ մահու-դե, բրդե շորով: Ելեքտրական հոսից վնասվածին առաջին ոգնություն ցույց տալիս՝ պետք է կատարել արհեստական շնչառություն: Պետք է հիշել, վոր հենց ելեքտրական հոսով վնասվե-լու զեպքում յերբեմն անդի յե ունենում այս-

պես առած «կեղծ մահ», այսինքն վնասվածին մեռած են հաշվում: Մինչդեռ այդպեսակ վնաս-վածին կարելի չէ փրկել: զրա համար հարկա-վոր է լինում կատարել արհեստական շնչառու-թյուն, բավականին յերկար ժամանակ և հիվան-դին հասցնել հիվանդանոց:

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԿԱՅԾԱԿԻՅ

Կայծակից պաշտպանվելու համար պետք է ամպրոպի ժամանակ հեռու մնալ զանազան շենքերից, մանավանդ ծառերից: Կայծակը հա-ճախ է խփում այդ առարկաներին: Սենյակում ճախ է խփում այդ առարկաներին: Սենյակում ճախ է խփում այդ առարկաներին: Սենյակում ճախ է խփում այդ առարկաներին: Սենյակում ճախ է խփում այդ առարկաներին:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԳԱԶԵՐՈՎ ԹՈՒՆԱՎՈՐ- ՎԱԾՆԵՐԻՆ

Ո՞վ չի լսել ձեզանից քիմիական պատերազ-մի մասին: Դեռ 1915 թվին պատերազմի ժա-մանակ սկսեցին թունավորել թշնամուն զազե-րով, և այդ նպատակով կամ բաց եյին թողնում զազը, վորն ամպի պես տարածվում եր թշնա-մու բանակի վրա, կամ լցնում եյին նրանով

Թնդանութի արկերը և արձակում թշնամու վրա: Վերջին ժամանակները ուժեղ են և սկսեցին լցնել գաղով. այդ տեսակ ուժերը ողանավերից վայր գցելով՝ կարելի չէ թունավորել մի այնպիսի քաղաք, վորը շատ հեռու չէ գտնվում ճակատից: Կան գազեր, վորոնք վոչ միայն թունավորում են մարդկանց, յերբ ներս են շնչվում ոգի հետ, այլև այրում են մաշկը, բշտիկներ առաջացնում նրա վրա:

Պատերազմի ժամանակ, գազերի ներգործությունից պաշտպանվելու համար, հագնում են գլխի և դեմքի վրա հակադադ դիմակներ: Ներս շնչած ոգն այդ դիմակի մեջ անցնում է մի տեսակ նյութի միջով, վորը մաքրում է գազի վնասակար խառնուրդը:



Սկզբում, յերբ սովոր չեն լինում հակադադ դիմակին, դժվար է լինում շնչելը, մասնավորապես վազքի կամ աշխատանքի ժամանակ. ուստի հարկավոր է աստիճանաբար սովորել դիմակին և

հիշել, վոր պատերազմի ժամանակ միայն այս կերպ կարելի չէ պաշտպանվել թշնամու գազային հարձակումից:

Տուժածին ոգնելու համար հարկավոր է դուրս բերել մաքուր ոդում, հանել հագուստը, վորը նույնպես գաղով ծծված է լինում, և կատարել արհեստական շնչառություն:

Ահա թե ինչու պիտե՛րին հարկավոր է այժմվանից ծանոթանալ գազերի և նրանցից պաշտպանելու միջոցների հետ:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԱԾԽԱԾՆԻ ԹԹՎՈՒԿՈՎ ԹՈՒՆԱՎՈՐՎԱԾԻՆ

Ածխածնի թթվուկով կամ, ինչպես ժողովուրդն է ասում, ածուխով թունավորվելը կոչվում է շփանց ընկնել: Շփանց ընկնողն սկզբում ունենում է գլխացավ, սրտախառնություն, ապա ուշագնացություն: Ածխածնի թթվուկը մի գազ է, վորը կուտակվում է սենյակի մեջ, յերբ վառարանը շուտ են փակում, յերբ փայտը կամ վառելանյութը լավ չի վառվել, յերբ ածուխը կիսաայրված է: Այս գազը վոչ հոտ ունի և վոչ գույն. վառարանի մեջ բռնկվող կապույտ կրակն ապացույց է, վոր կա այդ գազը. յերբ մի վորեն չենքում կա շփանց ընկնող, պետք է խուսելու բաց անել բոլոր դռներն ու լուսամուտները, ուշաթափվածին դուրս բերել մաքուր ոդում և կատարել արհեստական շնչառություն:

ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ

Արհեստական շնչառություն կատարելու պա-

տակն ե առաջ բերել շնչառություն, զրա համար փոխնիփոխ լայնացնում և սեղմում են կրծքի վանդակը: Արհեստական շնչառության ամենահասարակ ձևերից մեկը սա յե. փռել գետնին մի

1



2



3



Յերբեմն հիվանդը յերկար ժամանակ չի շնչում և շուտ ուշքի չի գալիս, սակայն չպետք է հուսահատվել և հիվանդին առանց ոգնության թողնել: Դրա համար պետք է դիմել բժշկին,


վերմակ կամ մի ուրիշ բան, պառկեցնել պիոններին մեջքի վրա, յերեսնի վեր, չոքել ծնկներին վրա, պառկած պիոնների գլխի մոտ, բաց անել հիվանդի թևերը և նորից հետ բերել, սեղմել կրծքի վանդակին ու իջեցնել. ահա այսպիսի շարժումներով հնարավոր է շնչառություն առաջ բերել և հիվանդին ուշքի բերել:

վորը կարող է ոգնության գալ ուրիշ յեղանակով:

Շնչառությունը վերականգնելու համար կան նաև ուրիշ ձևեր, կարելի յե քիթը խուտուտ տալ փետուրով, կամ տալ շնչելու համար սուր հոտ ունեցող մի վորևե նյութ, որինսակ՝ անուշադրի սպիրտ:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԶՐՈՎ ԽԵՂԴՎԱԾԻՆ

Խեղդվողին հանելով ջրից, իսկույն և յեթ պետք է հանել հագուստը, մատով կամ թաշկինակով լավ մաքրել բերանը ցեխից ու ավազից և հետո աշխատել նրան տալ այնպիսի դիրք, ինչպես նկարումն է



(96-րդ յերես): Փախուսից չպետք է վախենալ, Ծնկի վրա պահելիս պետք է սեղմել մեջքն ափով, վոր ստամոքսի

և թոքերի մեջ լցված ջուրը դուրս գա բերանից: Յերբեք չի կարելի ջուրն ընկածին կախ տալ ծառից գլուխն ի վար, ինչպես անում են այդ մի քանի գյուղերում. զրանից ամբողջ արյունը կլցվի գլուխը, վորը շատ վտանգավոր է. շարժել նրան նույնպես չի կարելի: Զուրն ընկածի մարմինը պետք է շփել մահուղի կտու-



րով, տաքացնել տաք
ջրով լիբը շշերով և
անհապաղ կատա-
րել արհեստական
շնչառություն:

Այս ձևով են ոգ-
նում նույնպես նը-
րանց, վորոնք հան-

քերում, փլվածքների դեպքում կամ պայթյու-
նից հետո հողիտակ են մնացել:

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ՈՒՏԵԼԻՔԻՅ ՅԵՎ ԽՄԵԼԻՔԻՅ
- ԹՈՒՆԱՎՈՐՎԱԾԻՆ

Ոգնելու համար նախ պետք է առաջ բե-
րել փսխում. յեթե այդ անհն շատ շուտ, այն
ժամանակ թույնն ամբողջովին դուրս կգա ստա-
մոքսից:

Փսխում առաջ բերելու նպատակով կարելի
յե խուտուտ տալ կոկորդը (բմպանը) մատով
կամ հավի յերկար փետուրով, կարելի յե մի
վորեւ անախորժ բան տալ խմելու, որինակ՝ յե:
րեք չորս բաժակ գոլ ջուր կամ սապոնաջուր-
Փսխման ժամանակ հիվանդի գլուխը պետք է
ծռել դեպի մի կողմը, այնպես, վոր գլուխը
մարմնի բնից ցածր լինի: Փսխումից հետո հի-
վանդին պետք է տալ այնպիսի դեղեր, վորոնք
վոջնչացնում են թույնը կամ անփնաս են դարձ-
նում այն. այդ տեսակ ճարերը հակաթույն են
կոչվում, վորոնք կարելի յե վերցնել դեղատանից:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ԹՈՒՆԱՎՈՐ ԽԱՅԹՎԱԾՔՆԵՐԻ
ՀԵՏ

Թունավոր ոձերի կամ միջատների կծե-
լու դեպքում նախ և առաջ պետք է հոգ տանել,
վոր վերքից թույնը չտարածվի մարմնի մեջ:
Տեղ-տեղ ընդունված է ծծել այդ տեսակ վեր-
քից թույնը, բայց այդ շատ վտանգավոր է, յե-
թե ծծողի շրթունքների վրա կամ բերանի մեջ
կա մի աննշան քերծվածք կամ փշացած ատամ,
նա ևս կարող է վարակվել. ավելի լավ է կծած
տեղին բաժակ զցել. դրա համար պետք է վերց-
նել մի փոքրիկ բաժակ, մեջը զցել մի փոքր
կտոր վառած բամբակ կամ թուղթ, մի ակըն-
թարթում շուռ տալ այդ բաժակը և դնել կծած
տեղի վրա այնպես, վոր բաժակի յեղրերը լավ
կպչեն մաշկին: Մաշկը ձգվում է բաժակի ներսը
և վերքից մի փոքր արյուն է գալիս. դրանից
հետո պետք է վերքն այրել տաքացրած քորո-
ցով կամ բարակ մեխով: Յեթե ձեռքի կամ վոտ-
քի վրա յե կծածը, կարելի յե կծած տեղից վե-
րել կապել, վոր թույնը չտարածվի մարմնի մեջ,
կապելուց հետո բաժակ զցել կծած տեղին, այ-
րել ալդ տեղը և հետո բաց անել կապը:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՏԵՂԱՓՈԽԵԼ ՎԻՐԱՎՈ-
ՐԻՆ ՅԵՎ ՀԻՎԱՆԴԻՆ


Յուրաքանչյուր պիոններ պետք է իմանա
վոչ միայն այն, թե ինչպես հասցնել առաջին

ողնությունը, այլև՝ ինչպես տեղափոխել վիրավորին կամ հիվանդին բժշկի մոտ: Դա առավել ևս պետք է գալիս եքսկլուզիաների ժամանակ և լազերում: Վիրավորված կամ ուշաթափված պիոններին կարելի չէ փոխադրել բազմաթիվ ձևերով, բավական է դրանցից միայն մի քանիսն իմանալ:




Յեթե պիոնները մենակ եւ երբեք չունենան ոգնող չկա, կարող եւ ահա այս ձևով փոխադրել: Սակայն այս ձևով յերկար տա-

նել չի լինի և բացի այդ՝ այսպես հնարավոր եւ փոխադրել թեթեւ հիվանդներին: Իսկ յեթե հիվանդն ավելի ծանր է և փոխադրողը չի կարողանում այդ ձևով տանել, կարելի չէ տանել այլ կերպ, բայց այս անգամ յերկու ընկերով:




Փոխադրման ավելի հանգիստ ձևը կա, վորը նույնպես կարելի չէ ոգտագործել. այս դեպ-



քում հիվանդը նույնիսկ կարող եւ հենվել ընկերոջ թևերի վրա:

Յեթե այս բոլոր ձևերը հնարավոր չի ոգտագործել,




այն ժամանակ պետք է պատրաստել նասիլկաներ (պատգարակ). դա շատ հեշտ կարելի չէ պատրաստել

դրա համար հարկավոր են գավազաններ, պարան, իսկ յեթե պարան ել չկա, այն ժամանակ պիտո-
ներեներից մի վորևե մեկի բլուզը. դրանց միջո-
ցով կարելի յե պատրաստել այնպես, ինչպես
ցույց ե տրված նկարում (99-րդ յերես)

ԱՐԵՎԸ, ԶՈՒՐԸ ՅԵՎ ՈՂԸ

Լագերային աշխատանքների ժամանակ,
յուրաքանչյուր պիտներ լավ պետք ե իմանա
արևից, ողից և ջրից ոգավելու կանոնները, քանի
վոր մարդու առողջությունը, կյանքը թշնամի-
ներից պաշտպանելու համար հարկավոր ե գին-
վել վոչ միայն զանազան ռազմական միջոցնե-
րով, այլև բնական զենքերով: Պիտների առող-
ջության լավագույն բարեկամներն են ա-
րեվը, ջուրը և ողք:



Ո Ղ Ը

Ողն անհրաժեշտ ե բոլորին: Կրակն առանց
ողի չի վառվի, մարդն առանց ողի չի ապրի:
Մարդը մի մեքենա յե, նրա ուսելիքը՝ վառե-
լիք, վորը լուծվում ե նրա ստամոքսում և ար-
յուն դառնում, տարածվելով մարմնի մեջ:

Մարդու կրծքի վանդակում կան թոքեր, վո-
րոնք փուքսի նման են. թոքերը միշտ պետք ե
լցված լինեն մաքուր ոդով, վորովհետև արյունն
անցնելով նրանց միջոցով կլանում ե ողի միջի
ամբողջ թթվածինը: Վորքան մարդը կանոնավոր
շնչի, վորքան նրա թոքերում մաքուր ող շատ
լինի, այնքան առողջ և ուժեղ կլինի որդանիզմը,
այնքան նրա սիրտը կանոնավոր կաշխատի:

Յեթե շոքեշարժ մեքենայի ողանցքը փա-
կենք, գնացքը հետգհետե կդադարեցնի իր ըն-
թացքը և վերջ ի վերջո կանգ կառնի: Նույնը
և մարդը: Վորքան նրա թոքերը վատառողջ են,
և մարդը: Վորքան նրա թոքերը մաքուր ողը, թոքերի
այնքան բիշ ե նրանցում մաքուր ողը, թոքերի
հիվանդությունը թոքախտ ե կոչվում, կամ թո-
քերի աուբերկուլյոզ: Թոքախտավորը հետգհետե
հյուծվում ե և թառամում:

Այս հիվանդությունը տարեկան, միայն Ռու-
սաստանում, հազարավոր մարդկանց գերեզման
ե տանում: Առաջ բժիշկներն այդ հիվանդու-
թյունն անբուժելի եյին համարում, սակայն
հիմա հիվանդները գնում են ծովափնյա տեղեր,

մայրի անտառներ, մաքուր ողի մեջ և արևի տակ, ու հազարավոր թռչախտավորներ բոլորովին առողջացած վերադառնում են աշխատանքի: Ձեզանից յուրաքանչյուրն անկասկած զգացել է, թե վորքան թեթեւ է շնչում ինքը բաղաժեց դուրս, անտառում, կամ նույնիսկ քաղաքի մեջ՝ անձրևից հետո: Ինչո՞ւ. վորովհետև անձրևից հետո ողի մեջ կամ բոլորովին փոշի չկա, կամ շատ քիչ կա, հետևապես քիչ փսսակալոր մանրեներ են ընկնում թռքերի և արյան մեջ:

Ամառ է. պիոներներ, ամեն կերպ աշխատեցեք լինել բացողյա տեղերում, պարտեզներում, անտառում և աշխատեցեք վորքան կարող եք ավելի մաքուր ող շնչել, մաքուր ողում ավելի շատ է թթվածինը:

Ա Ր Ե Վ Ը

Արևը կյանքի աղբյուրն է, առանց արևի վոչինչ չի կարող գոյություն ունենալ: Բոլոր կենդանիները սիրում են արևը, նրանք բոլորը ժամերով տաքանում են արևի տակ:

Բուսականությունը նույնպես ձգտում է դեպի արևը. ասում են, վոր յեղեմնու հարաֆային ճյուղերն ավելի շատ են լինում: Ինչո՞ւ, վորովհետև հարաֆային կողմում արևն ավելի շատ է, իսկ բույսերը սիրում են արևը: Արևը հսկայական ոգուտներ է տալիս մեզ. հիշում եք, վերևում ասացինք, վոր արևն ամենալավ ճարն է:

Ինչ է անում արևը: Նրա ճառագայթները թափանցում են մեր մարմնի մեջ և սպանում այնտեղ յեղած մանրեները, վորոնք կարող են մեզ ամեն տեսակի վնասներ հասցնել: Ահա թե ինչու այդքան անհրաժեշտ է արևը և ինչու պետք է արևի վաննաներ ընդունել: Բայց ամեն մի ճար (դեղ) կարելի չէ գործածել վորոշ ձևով և քանակությամբ: Բժշկիները դեղը տալիս ասում են, թե վորքան և յերբ պետք է ընդունել: Մի դեղը պետք է ընդունել ճաշից առաջ, մեկ ուրիշը՝ ճաշից հետո, մի դեղից տալիս են 20 կաթիլ, մյուսից՝ 30: Արևից ել ոգավել պետք է գիտենալ: Ահա արևով բժշկվելու կանոնները.

1) Բաց գլխով և կուշտ փորով արևի վաննաներ չընդունել. ամենալավ ժամանակն առավոտն է, սպիտակ թաշկինակը գլխին:

2) Առաջին օրը վաննա պետք է ընդունել 5 ըոպե, և ասպա ամեն օր 5 ըոպե ավելացնել՝ մինչև մեկ ժամ:

3) Մի օր յերկար չպառկել կամ լինել արևի տակ ու կաշին այրել, վոչ մի ոգուտ չունի դա: Հարկավոր է պարբերաբար ընդունել և մարմնի բոլոր կողմերը հավասարաչափ դարձնել արևին:

4) Վաննաներ ընդունելիս վոչինչ չպետք է խմել:

5) Վաննաներից հետո պետք է գոլ ջուր

ածել վրան կամ թրջած շորով սրբել մարմինը, հետո շորացնել և հագնվել. ամենից լավ կլինի լողանալ, բայց մի բիշ սովերոտ տեղում կանգնելուց հետո:

Ձ Ո Ւ Ր Ը

Պիոնների բարեկամներից և առողջացման գենքերից մեկն էլ ջուրն է: Մաքրություն պահպանելով և խնամքով լողանալով, հնարավոր է սրբել այն բոլոր կեղտերը, վոր հավաքվել է մաշկի վրա: Հարկավոր է ոգտագործել ջուրը. վորքան մաքուր պահվի մարմինը, այնքան քիչ կարելի յե հիվանդանալ:

Լողանալու միջոցին զանազան շարժումներ են արվում, և լողացողը հաճախ ալիքների և հոսող ջրի հետ կռվում է: Այդ շարժումները նըպաստում են մարմնի մկանների և այլն մասերի ներդաշնակ զարգացմանը, միաժամանակ զարգացնելով պիոնների մեջ կամքի ուժ. բացի այդ, ուժեղանում է արյան շրջանառությունը և նրա հետ՝ օրգանիզմի սնուցումը:

Սակայն, վորպեսզի սառը ջրում լողանալը փառա չբերի, հարկավոր է կատարել մի շարք կանոններ.

1. Չպետք է քրտնած մտնել սառը ջուրը:
2. Ջուր մտնելուց առաջ պետք է թրջել գլուխը և կուրծքը, վորպեսզի այդ տեղերը հանկարծ արյունը չհավաքվի և փառ պատճառի:

3. Ճաշից անմիջապես հետո չի կարելի լողանալ, ուշագնացություն և սրտխառնուր կարող է առաջանալ:

4. Վորքան սառն է ջուրը, այնքան քիչ պետք է մնալ մեջը: Շատ սառն ջրի մեջ մեկ-յերկու բուպեյից ավելի լողանալը վտանգավոր է:

5. Իսկ միջին ջերմություն ունեցող ջրի մեջ կարելի յե լողանալ 10—15 բուպե, բայց վոչ ավելի:

6. Իսկույն պետք է դադարել լողանալուց, յեթե առաջ է գալիս մարմնի սարսուռ և դող:

7. Յերբ ջուր մտնելուց անմիջապես հետո կաշին շատ շուտ կարմրում է և հաճելի տաքություն է զգացվում, այդ բանը պետք է ամենահաջող պայմանը համարել լողանալու դեպքում:

ԼՈՂԱՆԱԼ ՅԵՎ ԱՐԵՎԻ ՎԱՆԱՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼ ԲՈՂՈՐՈՎԻՆ ՁԻ ԿԱՐԵԼԻ

1) Տենդային և բորբոքման հիվանդությունների ժամանակ:

2) Կաշվի սուր հիվանդությունների ժամանակ:

3) Հաճախ արյունահոսությունների յենթակա անձնավորություններին:


4) Չափազանց նիհար և կաղմվածքով թույլ անձնավորություններին:

5) Սրտի հիվանդություն ունեցողներին:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ՎԵՐՑՆԻ ԻՐ ՀԵՏ ԼԱԳԵՐ
ԳՆԱՅՈՂ ՊԻՈՆԵՐԸ

Ահա թե ինչ եյին վերցրել իրենց հետ ան-
ցյալ տարի Լենինականի ու Յերևանի լագեր
գնացող պիոներները. դա որինակելի յե, բոլորդ
ել պետք ե ունենաք:



ՊԻՈՆԵՐԻ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԶԳԵՍՏԸ

1. Կարճ անդրավարտիկ, հետևում, աջ կող-
մը գրպան:
2. Շապիկ, յետ ծալած ոձիբով և ծալվող
թևերով, կրճբին յերկու գրպան:

3. Հասարակ, բայց ամուր կոշիկներ (վո-
տի չափով):

4. Գուլպաներ (հասարակ):
5. Գոտի, ցանկալի յե կողքերին կեռեր:
6. Կարմիր վզկապ:
7. Սուլիչ:
8. Գլխարկ:
9. Դանակ:
10. Պարան, 5 մետրից վոչ պակաս:
11. Գավազան, քիչ բարձր իր հասակից:
12. Հուշատետր և մատիտ:
13. Ձեռքի թաշկինակներ:
14. Դեղատուփ, վորը պետք ե ունենա՝

ա. վիրակապ. դ. անուշադրի սպիրտ.
բ. բամբակ. յե. մաքուր սպիրտ.
գ. յոդ. գ. մարլա.

ՊԻՈՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԱՅԻՆ ԶԳԵՍՏ՝

1. Մեջքի պարկ, վորի մեջ պետք ե լինի՝
ա. սպիտակեղեն.
բ. յերկու գույգ գուլպա.
գ. սապոն՝ թիթեղյա տուփի մեջ.
դ. ատամի փոշի և խոզանակ.
յե. յերեսսրբիչ.
զ. սանտր.
ը. գդալ, դանակ, պատառաքաղ.
թ. Փոքր տոպրակներով մթերքներ և ուտելիք:


2. Վերմակ—բարակ առնակ:
3. Վրանի քաթան (սա պարտադիր չէ):
4. Փոքրիկ կաթսա (կատիլոկ):
5. Գավաթ:
6. Ճանապարհորդական տակառիկ (ջրաման, ֆլաշկա):

7. Ասեղներ, թել, կոճակներ, անգլիական քորոցներ, լուցկի:

8. Փոքրիկ պարկ՝ բարձի տեղ գործածելու համար:

9. Տոպրակ՝ ներքնակի տեղ գործածելու համար:

Յեթե այս բոլորը պատրաստ են, անհրաժեշտ է հավաքել պայուսակի կամ առանձին պարկի մեջ և դասավորել մոտավորապես այսպես.



1. Փոքրիկ կաթսա և գավաթ, 2. փաթած թած պարան, վորը հագցնում եք գոտուն, 3. փաթած վերմակին ամրացրած կաթսան, 4. պայուսակ, 5. փաթած վերմակը, կաթսան և պայուսակը միասին:

ՈՂԱԿԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԵՐԸ ԼԱԳԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Քլունդ	1 հատ
2. Բահ	1 »
3. Կացին	1 »
4. Լաստեր	2 »
5. Նշանախոսության դրոշներ	2 գույգ
6. Կողմնացույց	1 հատ
7. Ժամացույց	1 »
8. Շարժուն դեղարան, վորը պետք է ու-	

նենա՝

ա. փոքրիկ ժկրատ.

բ. վիրակապ.

գ. յեռանկյունի թաշկինակ 2 հ.

դ. բորակաթթու (բորնայա կիսլատա).

յե. յոդ.

զ. անգլիական քորոցներ.


ը. ցմկյան յուղ.

թ. սպեղանի (պլաստին).


ժ. անուշադրի սպիրտ.

ի. մարլա:

ԼԱԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐԴՉԱԿԱՆ ՍԻԵՄԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾԻ



ԼԱԳԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ



ԼԱԳԵՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Ինչպէս են սկսվել նախապատրաստական աշխատանքները (մանրամասն նկարագրել):

2. Ինչպիսի՞ հասարակական կարծիք եւ ստեղծվել լագերի կազմակերպման շուրջը (ծնողական, կոմբլիշի, կոմսոմոլի բլիշի, տեղկոմի, հասարակական կազմակերպութիւնների, նրանց ժողովների հանած վորոշումները, նրանց կողմից ցույց տրված գործնական աջակցութիւնը, առողջապահական մարմինների ոժանդակութիւնը):

3. Վորքան պիտո՞նք եւ դուրս բերված լագեր. նրանց քանակային և վորակային կազմը (սոց. դրութիւնը, սեռը, տարիքը և այլն):

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Քանի՞ ուրով եւ կազմակերպված յեղել լագերը:

2. Վորքան փող եւ ստացված լագերի համար և վորտեղից (կենտրոնային, պրոֆմիութիւններից, ծնողներից, պետհիմնարկներից և այլն):

3. Ինչքան եւ ծախսված յուրաքանչյուր

պիտոների սննդի համար որական և ամողջ լագերի ընթացքում:

4. Բավարարում եր սնունդը, թե վոչ:

5. Հագերի դրութիւնը — վրանները կամ շենքեր, սենյակների կամ վրանների թիվը, լուսավորութիւնը (լամպեր, ելեքտրականութիւն և մոմ), սեղանները, նստարանները, մահճակալները, բարձերը, վերմակները. (նկարագրեցե՛ք ինչպիսին եյին):

ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԸ

1. Ինչպէս եր դրված ղեկավարութիւն գործը կոլլեկտիվներում և ամողջ լագերում.

ա) Նկարեցե՛ք լագերի կազմակերպչական կառուցվածքի սխեման.

բ) Նկարագրեցե՛ք, թե ինչպէս եյին աշխատում լագերի առանձին մարմինները (լագերային խորհուրդը, կոլլեկտիվների խորհուրդը, կոմիտեաները և այլն):

գ) Նկարագրեցե՛ք լագերի հերթապահութիւն կարգը, ինչպէս եր պարվում (ողակները, կոլլեկտիվները, թե առանձին պիտոների միջոցով):

2. Ինչպէս եյին ծրագրվում և հաշվի առնվում լագերի աշխատանքների զանազան բնագավառները:

3. Կազմակերպվում եյին ընդհանուր պիտ-

ներական հավաքույթներ և ի՞նչ խնդիրներ եյին մշակվում այնտեղ:

4. Ինչպիսի՞ աշխատանք եր տարվում պիտոներ ակտիվի հետ.

ա) Հրավիրվում եյին խորհրդակցություններ և ի՞նչ խնդիրների շուրջը.

բ) Ինչպիսի՞ պատասխանատու աշխատանքներ եյին հանձնարարվում ակտիվ և կոմյերիտական պիտոներին:

5. Ինչպիսի՞ մերձեցում գոյություն ուներ ողակների և առհասարակ լազերի պիտոներին:

6. Տղաների և աղջիկների փոխհարաբերությունը:

7. Ի՞նչ միջոցներով եր պահպանվում լազերի կարգապահությունը (հեռացում լազերից, ինչ պատճառով և վորքան):

ՀԱՍՍԻՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԼԱԳԵՐՈՒՄ

1. Ինչպիսի՞ հասարակական աշխատանքներ ծրագրված եր անցկացնելու լազերում և ի՞նչ եք անցկացրել:

2. Յեթե հասարակական աշխատանքներ չեն կատարվել, ժանրամասն զրեցեք պատճառները:

3. Շրջապատող հասարակության (գյուղացիության, բանվորության) վերաբերմունքը դե-

պի պիտոներին ու դեպի նրանց կատարած աշխատանքը:

4. Զի՞ տուժել առողջապահական աշխատանքն ի հաշիվ հասարակական աշխատանքի. վորքան ժամանակ եր հատկացվում հասարակական աշխատանքի:

5. Ո՞վ եր դեկավարում պիտոներին հասարակական աշխատանքները և ի՞նչ ուժեր եյին ժամանակցում այդ աշխատանքներին:

6. Ի՞նչ կապ ե պահպանել լազերը մոտակա գյուղերի պիտոներական կոլլեկտիվների և անկազմակերպ պատանիների հետ. ի՞նչ հասարակական աշխատանք ե կատարել նրանց հետ:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԼԱԳԵՐՈՒՄ

1. Պիտոներին առողջությունը (նախքան լազեր գնալը և լազերից հետո). ի՞նչ զրական արդյունքներ են ստացվել լազերի ընթացքում (թվական տվյալներ):

2. Նկարագրեցեք լազերի որվա ուժեղությունը (ինչպե՞ս եր անցկենում լազերի որը և վորքանով եր կիրառվում լազերի ուժեղությունը):

3. Ինչպիսի՞ առողջապահական աշխատանքներ են տարվել լազերում.

ա) Ֆիզկուլտուրա (ո՞վ եր դեկավարում, կոլլեկտիվը, թե առանձին հրահանգիչ).

բ) Խաղեր.

դ) եքսկուրսիաներ և զբոսանքներ.

դ) Լող.

յե) Արևային վանաններ և այլն:

4. Ի՞նչ ե արել լագերը՝ անհատական առողջապահական գիտելիքներ ձեռք բերելու ասպարիզում (ատամների մաքրում, ձեռքերի, վզի և ակունքների լվացում, մարմնի շփում և այլն):

5. Լագերում առանձին բժիշկ կա՞ր և ինչո՞ւմ եր արտահայտվում նրա աշխատանքը:

6. Ինչպիսի՞ առողջապահական աշխատանքներ եյին տարվում շրջապատի անկազմակերպ պատանիների և մեծահասակների մեջ:

7. Ո՞վ եր տանում առողջապահական աշխատանքները պիոներների մեջ (սանիտարական կոմիտեի, ողակ և այլն):

8. Յեղե՞լ են հիվանդ պիոներներ լագերում, յեթե յեղել են, ինչքան, ո՞վ եր ոգնություն ցույց տալիս նրանց. գոյություն ունե՞ր փոքրիկ զեղատուն կամ առանձին սենյակ հիվանդների համար:

ՈԱԶՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԼԱԳԵՐՈՒՄ

1. Ինչո՞ւմ եր կայանում լագերի ուղղական աշխատանքների բովանդակությունը.

ա) զբոսայցիներ.

բ) արշավանք.

գ) ուղղական խաղ.

դ) տեղագրություն.

յե) սիգնալիզացիա.

դ) առաջին ոգնություն.

3. Ինչպիսի՞ ուղղական ինվենտարով եր ոգտվում լագերը.

ա) ՊԱՋԸ ավիոքիմի անկյուն.

բ) հրացաններ.

գ) տիւր.

դ) նետ ու աղեղ և այլն:

5. Լագերը կապ պահպանում եր կաշմիր բանակի հետ և ինչո՞ւմ եր կայանում այդ կապը:

ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՀԱՆԳԻՍՏԸ ԼԱԳԵՐՈՒՄ

1. Ինչպե՞ս ե կազմակերպվել պիոներների հանգիստն ու ժամանցը լագերում.

ա) Յեղե՞լ են խմբակներ և ինչպե՞ս եյին աշխատում (գրադատիկ, նկարչական, շախմատի, յերաժշտական և այլն).

բ) Յեղե՞լ ե կենդանի լրագիր և ի՞նչ ե արել նա լագերում.

գ) Անցկացվե՞լ են զբույցներ խարուկի շուրջը. բանիսը և ինչպիսի՞ նյութի մասին.

դ) Կազմակերպվե՞լ են լագերում ինքնագործունեյության յերեկոներ, ցերեկոյթներ. (նրանց ծրագիրը, պիոներների մասնակցությունը նրանց անցկացման գործին).

յե) Անցկացվե՞լ են զբոսանքներ (ո՞ւր և

ինչպիսիները)։ յեղէլ ե կինո, ժամանակցել են պիտներները գյուղական զանազան տոնակատարութիւններին. ինչպիսի՞ խաղեր են կազմակերպուել լազերում։

2. Յեղէլ են ոգակներն, կողեկալիլի կամ առանձին պիտներներն միջոցով կազմված յերգեր, վոտանափորներ, չաստուշկաներ և այլն (գրեցեք այդպիսիները)։



Յ Ա Ն Կ

Գլուխ I

ԼԱԳԵՐԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

1. Ի՞նչ ե լազերը
2. Ինչի՞ համար ե լազերը
3. Պատրաստվենք լազերին
4. Վազորոք հարկափոր ե իմանալ, թե վորտե՞ղ և ինչպե՞ս պետք ե հիմնել պիտներական լազերը
5. Ինչպե՞ս հիմնել լազերը
6. ԿՈՆԿՐԵՏ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆԻ ԼԱԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ

Գլուխ II

ՄԻ ԲԱՆԻ ԱՆՎՐԱԺԵՑ ԳԻՏԵԼԻԲՆԵՐ

1. Ինչպե՞ս ոգավել գավազանից
2. Հանգուլցներ
3. Խարույկները և նրանց պատրաստելու յեղանակը
4. Ինչպե՞ս պատրաստել գետնափոր հացասեղան
5. Ինչպե՞ս պատրաստվել քնելու
6. Քնած ժամանակ ինչպե՞ս զգուշանալ զանազան խայթուիներէն
7. Ինչպե՞ս տաքանալ
8. Ինչպե՞ս պատրաստել լապտեր
9. Կախարաններ

10. Սեղան կամ դրքակալ
11. Ավել
12. Ինչպե՞ս հեշտ կերպով փոխադրություններ կատարել
13. Զուր չթափանցող կտոր և կոշիկ
14. Ինչպե՞ս պաշտպանել աղը խոնավությունից
15. Լուցկիներ, վորոնք չեն վախենում ջրից

Գլուխ III

ՈՍԱՄԱԿԱՆ ՄԻ ԲԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

1. Մեր ունեցած աշխատանքների փորձը
2. Նշանախոսություն
3. Նշանախոսություն պայմանական ձևերով
4. Նշանախոսություն սուլիչով
5. Փոստատար աղափնիների մասին
6. Հետախուզական նշաններ
7. Ինչպե՞ս վորոշել յերկրի կողմերը
8. Ինչպե՞ս իմանալ գետի լայնությունը՝ առանց նրա վրայից անցնելու
9. Ինչպե՞ս չափել գետի արագությունը
10. Ինչպե՞ս չափել այն բարձրությունները, վորոնց չի կարելի հասնել
11. Ինչպե՞ս պատրաստել հասարակ կամուրջներ
12. Ինչպե՞ս պիտի վորոշել տարածությունները

Գլուխ IV

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

1. Ինչպե՞ս վարվել հիվանդի և վերավորի հետ
2. Ինչպե՞ս վարվել վերքի հետ

3. Ինչպե՞ս կապել վերքը
4. Ինչպե՞ս դադարեցնել արյունահոսությունը
5. Ինչպե՞ս վարվել կոտրվածքների հետ
6. Ինչպե՞ս վարվել այրվածքի հետ
7. Ինչպե՞ս ոգնել արևահարին և ջերմահարին
8. Ինչպե՞ս ոգնել ելեքտրականությունից վնասվածին
9. Ինչպե՞ս պաշտպանվել կայծակից
10. Ինչպե՞ս ոգնել գազերով թունավորվածներին
11. Ինչպե՞ս ոգնել ածխածնի թթվուկով թունավորվածին
12. Արհեստական շնչառություն
13. Ինչպե՞ս ոգնել ջրով խեղդվածին
14. Ինչպե՞ս ոգնել ուտելիքից և խմելիքից թունավորվածին
15. Ինչպե՞ս վարվել թունավոր խայթվածքների հետ
16. Ինչպե՞ս պետք է տեղափոխել վերավորին և հիվանդին

ԱՐԵՎԸ, ԶՈՒՐԸ ՅԵՎ ՈՂԸ

1. Ողբ
2. Արևը
3. Զուրը

ՀԱՎԵԼՎԱՄ

1. Ի՞նչ պետք է վերցնի իր հետ լագեր գնացող պիոները
2. Պիոներին սովորական զգեստը
3. Պիոներին արշավանքի զգեստը
4. Ողակի անհրաժեշտ իրերի և զգեստի համար լագերի կազմակերպության կողմից վաճառվածքի սխեման (նկար)



ԼԱԳԵՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵԱՌՄԱՆ ՀԱՐ-
ՑԱԹԵՐԹԻԿ

1. Նախապատրաստական աշխատանք
2. Տնտեսական դրուժյուն
3. Կառուցվածքը և աշխատանքների սխեման
4. Հասարակական աշխատանքները լազերում
5. Առողջապահական աշխատանքները լազերում
6. Ռազմական աշխատանքները լազերում
7. Պիտանքների հանդիստը լազերում



ՀՀ Ազգային գրադարան



NL0187463

